

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ



ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
ՏՐԱՆՇ 3 (ԹԱԼԻՆ-ԼԱՆՋԻԿ, ԼԱՆՋԻԿ-ԳՅՈՒՄՐԻ), ԵՆԹԱՀԱՏՎԱԾ 3
ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՅԻՍ 11, 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Ամփոփագիր	4
II. Ներածություն	6
ա) Ծրագրի ընդհանուր նկարագիրը.....	6
բ) ՀՕՏԾ նպատակները և շրջանակը.....	8
գ) Տարաբնակեցման քաղաքականությունը. իրավական շրջանակ և իրավասություններ	9
դ) Մոնիտորինգ և գնահատում.....	11
III. ԱՄԳ մեթոդաբանությունը	13
IV. ՀՕՏԾ իրականացման ընթացակարգերը	15
ա) Ինստիտուցիոնալ կառուցվածք և կառավարում.....	15
բ) Հանրային լսումներ և ԱԵԱ իրազեկում	16
գ) Բողոքներ և բողոքարկման մեխանիզմ.....	17
դ) Փոխհատուցման տրամադրման գործընթաց	19
ե) Հարկադիր օտարում և ձեռնարկված միջոցներ.....	21
զ) Օրինականացում և հատուկ դեպքեր	22
V. Ազդեցության փաստացի շրջանակը	23
ա) Հողի մշտական կորուստ և հողօգտագործողների վրա ազդեցություն.....	23
բ) Ազդեցությունը մշակաբույսերի և ծառերի վրա	25
գ) Ազդեցությունը շենքերի/շինությունների և շարժական բարելավումների վրա.....	26
դ) Ազդեցությունը բիզնեսի և զբաղվածության վրա	26
ե) Վերաբնակեցում.....	27
զ) Ազդեցությունը սոցիալապես խոցելիների վրա և «խիստ» ազդեցություն.....	27
VI. Տրամադրված փոխհատուցման գնահատումը	29
ա) Փոխհատուցումը հողի կորստի դիմաց.....	29
բ) Փոխհատուցումը մշակաբույսերի դիմաց.....	31
գ) Փոխհատուցումը ծառերի դիմաց.....	32
դ) Փոխհատուցումը շենքերի/շինությունների և շարժական բարելավումների դիմաց.....	33
ե) Նպաստներ «սոցիալապես խոցելի» խմբերի համար	34
զ) Օժանդակությունը «խիստ ազդեցության» դեպքում	36
VII. ՀՕՏԾ իրականացման բյուջեն	38
VIII. Հանրային գոհունակությունը	42
IX. ԱՄԳ եզրակացությունը Թալին-Լանջիկ հատվածում ՀՕՏԾ իրականացման վերաբերյալ (ԱԶԲ)	46
X. ԱՄԳ եզրակացությունը Լանջիկ-Գյումրի հատվածում ՀՕՏԾ իրականացման վերաբերյալ (ԵՆԲ)	48
Հավելված 1. S3 ՀՕՏԾ-ի 2-րդ ենթահատվածում հարկադիր օտարման ընթացքում գտնվող հողերի ամփոփ նկարագրությունը (անգլերեն)	50
Հավելված 2. ՀՕՏԾ իրականացման կարգավիճակը S3 ճանապարհի 6 ենթահատվածներում (անգլերեն)	53

Օգտագործված հապավումներ

ԱԵԱ	Ազդեցության ենթակա անձ
ԱԵՏՏ	Ազդեցության ենթակա տնային տնտեսություն
ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱՄԳ	Արտաքին մոնիտորինգի գործակալություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԱԲՀ	Անվտանգության քաղաքականության հայտարարագիր
ԲԱԱ	Բողոքների առանցքային անձ
ԲԼՄ	Բողոքների լուծման մեխանիզմ
ԲՔԽ	Բողոքների քննման խումբ
ԵՆԲ	Եվրոպական ներդրումային բանկ
ԻԽ	Իրականացնող խորհրդատու
ԾԻԿ	Ծրագրի իրականացման կազմակերպություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՕՏԾ	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր
ՀՕՏՇ	Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակ
ՄԶՀ	Մանրամասն չափագրման հետազոտություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿՏՏՆ	Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ՏԾԻԿ	Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն
ՏՏ	Տնային տնտեսություն
ՏՅ	Տրանշ 3

I. Ամփոփագիր

- Սույն «Համապատասխանության հաշվետվությունը» մշակվել է Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագրի Տրանշ 3-ի շրջանակներում իրականացվող Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրերի (ՀՕՏԾ) արտաքին մոնիտորինգի արդյունքում:
- Տրանշ 3-ը ներառում է Թալին-Գյումրի 46.1 կմ երկարությամբ ճանապարհահատվածը, որի Թալին-Լանջիկ 18.7 կմ հատվածը (կմ 71+500 - կմ 90+200) ֆինանսավորում է Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ), իսկ Լանջիկ-Գյումրի 27.4 կմ (կմ 90+200 - կմ 117+670) հատվածը՝ Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ): Արդյունքում, ՀՀ կառավարությունը հաստատել է երկու տարբեր ՀՕՏԾ-ներ, որոնք այնուհանդերձ հիմնված են նույն սկզբունքների և քաղաքականության դրույթների վրա:
- Տրանշ 3-ն իրականացվում է 6 առանձին ենթահատվածներով: Դրա համար արտաքին մոնիտորինգի շրջանակներում համապատասխանության գնահատումները ևս իրականացվում են ըստ ենթահատվածների (տեխնիկական առաջադրանքի համաձայն)՝ միաժամանակ առանձնացված ներկայացնելով ԱԶԲ և ԵՆԲ հատվածներին վերաբերող տվյալները: Սույն հաշվետվությունն անդրադառնում է Տրանշ 3-ի 3-րդ ենթահատվածին և ներառում ինչպես ԱԶԲ, այնպես էլ ԵՆԲ ֆինանսավորմամբ հատվածները: Ըստ կողմերի միջև պայմանավորվածության, յուրաքանչյուր կողմ ուսումնասիրում և հաստատում է Համապատասխանության գնահատման հաշվետվության միայն այն մասերը/բաժինները, որոնք ներկայացնում են տվյալ կողմի ֆինանսավորմամբ իրականացվող հատվածի արդյունքները¹:
- Տրանշ 3-ի 3-րդ ենթահատվածի ազդեցության գոտին ԱԶԲ և ԵՆԲ ֆինանսավորմամբ հատվածներում համատեղ ներառում է 3 գյուղական համայնքների 140 հողակտորներ (այդ թվում՝ 3 պետական, 57 համայնքային և 80 մասնավոր)՝ 263,268 մ² օտարման ընդհանուր մակերեսով: Ազդեցության ենթակա տնային տնտեսությունները 120-ն են, որոնցից 26-ը խոցելի են: Առկա են նաև 16 չձևակերպված օգտագործողներ: Ծրագրի խիստ ազդեցության է ենթարկվել ընդամենը 74 ԱԵՏՏ (արդյունավետ ակտիվների ավելի քան 10 տոկոսի կորուստ), որից 20-ը խոցելի են:
- Առկա են մշակաբույսերի, ծառերի կորստի և շինությունների վրա ազդեցության դեպքեր: Բիզնեսի, զբաղվածության կորստի, ինչպես նաև ֆիզիկական վերաբնակեցման (ֆիզիկական տեղահանման) դեպքեր չեն եղել:
- Համապատասխանության ուսումնասիրություններն ընդգրկել են ՀՕՏԾ իրականացման գործընթացները, ազդեցության շրջանակի որոշումը և տրամադրված փոխհատուցման գնահատումները, ինչպես նաև հարկադիր օտարման գործընթացի նախաձեռնումը:
- Տրանշ 3-ի 3-րդ ենթահատվածի ՀՕՏԾ-ների իրականացման գործընթացները համապատասխանում են սահմանված դրույթներին և քաղաքականության պահանջներին: Երկու հատվածներում ծառերի, շենքերի/շինությունների և շարժական բարելավումների վրա Ծրագրի ազդեցության դիմաց փոխհատուցումները համապատասխանում են ՀՕՏԾ դրույթներին:
- Թալին-Լանջիկ հատվածի 3-րդ ենթահատվածում (ԱԶԲ) առաջարկվել էին ճշգրտող միջոցառումներ: Մասնավորապես, Մաստարա համայնքի 3 համայնքային հողակտորների հողի մշտական կորստի դիմաց փոխհատուցումը չի համապատասխանել ՀՕՏԾ դրույթներին: ՏԾԻԿ կողմից իրականացված ճշգրտող միջոցառումների արդյունքում համայնքին լրացուցիչ փոխհատուցվել է 229,680 դրամ:
- Լանջիկ-Գյումրի հատվածի 3-րդ ենթահատվածում (ԵՆԲ) նույնպես առաջարկվել էր ճշգրտող միջոցառում իրականացնել: Մասնավորապես, Մարալիկ համայնքի 1 համայնքային հողի մշտական

¹ Իրականացնող խորհրդատուի ՀՕՏԾ իրականացման գործողությունների ծրագրի համաձայն ՀՕՏԾ-ների իրականացումը Թալին-Լանջիկ (ԱԶԲ) և Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ) հատվածներում պետք է զուգահեռ ընթանա բոլոր 6 ենթահատվածներով (այդպիսով իրականացվող յուրաքանչյուր ենթահատված հողակտորներ է ներառում երկու հատվածներից): Սույն մոտեցումը վերաբերում է Կապալառուի աշխատանքի պայմանագրի համաձայն ՀՕՏԾ-ից ազատ հատվածների միաժամանակ և՛ Թալին-Լանջիկ, և՛ Լանջիկ-Գյումրի հատվածներից տրամադրելու պարտավորությանը: Ուստի, Համապատասխանության գնահատման հաշվետվությունը ներառում է արտաքին մոնիտորինգի գործողությունների ամփոփումը ճանապարհի յուրաքանչյուր հատվածում միաժամանակ Թալին-Լանջիկ (ԱԶԲ) և Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ) հատվածների համար: Մոնիտորինգի արդյունքները և եզրահանգումներն առանձնացվում են ըստ ԱԶԲ և ԵՆԲ հատվածների:

կորստի դիմաց փոխհատուցումը չի համապատասխանում ՀՕՏԾ դրույթներին: ՏԾԻԿ կողմից իրականացված ճշգրտող միջոցառումների արդյունքում համայնքին 63,000 դրամի լրացուցիչ փոխհատուցում է վճարվել:²

- ՀՕՏԾ իրականացման վերաբերյալ Տրանշ 3-ի 3-րդ ենթահատվածի ԱԵՏՏ-ների գոհունակությունը միջինից բարձր մակարդակում է:
- Սույն հաշվետվության պատրաստման դրությամբ 3-րդ ենթահատվածում հարկադիր օտարման գործընթացում դեռևս մնում է 15 հողակտոր, որոնցից՝ 9 մասնավոր հողակտոր ԱԶԲ հատվածից և 6 մասնավոր հողակտոր ԵԼԲ հատվածից: Այս հողակտորների վրա առկա չէ որևէ բնակելի շինություն կամ ձեռնարկատիրական գործունեություն; Նշված հողակտորները գյուղատնտեսական նպատակով օգտագործվող վարելահողեր են: ՏԾԻԿ կողմից նախաձեռնված հարկադիր օտարման գործընթացի ընթացակարգերը համապատասխանում են ՀՕՏԾ դրույթներին: Այնուամենայնիվ, նշված 15 դեպքերի մասով ՀՕՏԾ իրականացումը կհամարվի հաջողությամբ ավարտված և հարկադիր օտարման ընթացքում գտնվող հատվածներում շինարարական աշխատանքների թույլտվություն կտրամադրվի միայն հողերի օտարման մասին դատարանի որոշման ուժի մեջ մտնելուց հետո: Տ3 ՀՕՏԾ-ի 3-րդ ենթահատվածում հարկադիր օտարման ընթացքում գտնվող հողերի ամփոփ նկարագրությունը ներկայացված է Հավելված 1-ում: Տ3 ՀՕՏԾ ավարտված հատվածների և հարկադիր օտարման ընթացքում գտնվող հատվածների սխեման ներկայացված է Հավելված 2-ում:

Այսպիսով, ըստ արտաքին մոնիթորինգի արդյունքների, հիմք ընդունելով վերոհիշյալ ճշգրտող միջոցառումների իրականացման ավարտը, Թալին-Լանջիկ հատվածի 3-րդ ենթահատվածում ՀՕՏԾ իրականացումը կարելի է համարել հաջողությամբ ավարտված և սահմանված ընթացակարգերին համապատասխանող 60 հողակտորներից 51-ի համար: Մնացած 9 մասնավոր հողակտորների համար հարկադիր օտարման գործընթացը շարունակվում է:

Արտաքին մոնիթորինգի արդյունքների համաձայն, հիմք ընդունելով վեհորիշյալ ճշգրտող միջոցառումների իրականացման ավարտը, Լանջիկ-Գյումրի հատվածի 3-րդ ենթահատվածում ՀՕՏԾ իրականացումը կարելի է համարել հաջողությամբ ավարտված և սահմանված ընթացակարգերին համապատասխանող 80 հողակտորներից 74-ի համար: Մնացած 6 մասնավոր հողակտորների համար հարկադիր օտարման գործընթացը շարունակվում է:


² 2017 թվականի մայիսի 10-ին ԱՄԳ-ն ՏԾԻԿ-ից ստացել է գրավոր հաստատում առաջադրված ճշգրտող միջոցառումների ամբողջական իրականացման մասին:

II. Ներածություն

ա) Ծրագրի ընդհանուր նկարագիրը

1. ՀՀ կառավարությունը նախաձեռնել է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր): Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքը ձգվում է 556 կմ՝ սկիզբ առնելով Վրաստանին սահմանակից Բավրայից, շարունակվելով դեպի Գյումրի, Թալին, Երևան, Գորիս, Կապան և ավարտվելով Մեղրիում: Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) և Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) համաձայնել են ՀՀ կառավարությանն աջակցել այս նախաձեռնությունում: Մասնավորապես, Ծրագիրը ֆինանսավորելու համար ԱԶԲ-ն Բազմափուլ ֆինանսավորման գործիքի միջոցով Հայաստանի Հանրապետությանը կտրամադրի 500 մլն ԱՄՆ դոլար վարկ, իսկ ԵՆԲ-ն՝ 60 մլն եվրո վարկ: ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը (այսուհետ՝ ՏԿՏՏՆ) Ծրագրի Գործադիր մարմինն է, իսկ «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ՏԾԻԿ³)՝ Ծրագրի Իրականացնող գործակալությունը:
2. Ծրագիրն իրականացվում է ըստ առանձին ֆինանսական տրանշերի: Ծրագրի Տրանշ 3-ը սկսվում է Թալինում (կմ 71+500) և ավարտվում Գյումրիի մոտ (կմ 117+670): Տրանշ 3-ի նպատակն է Թալինից Գյումրի 46.1 կմ հատվածում գոյություն ունեցող Մ1 մայրուղու երկայնքով կառուցել հանդիպակաց ուղղություններով երկու երթուկների մասերից, ընդհանուր 4 երթուկային գոտիներից բաղկացած միջազգային ստանդարտներին համապատասխանող ճանապարհ: Մոտ 3.5 կմ հատվածի համար նախատեսված է նոր ծրագիծ, իսկ մոտ 42.6 կմ հատվածում իրականացվելու է գոյություն ունեցող երկշարք ճանապարհի լայնացում՝ դարձնելով քառաշարք ճանապարհ:

Նկար 1: Տրանշ 3-ի Ծրագրի տեղակայվածությունը



3. Նոր ծրագիծն ընդհանուր առմամբ հետևում է գոյություն ունեցող մայրուղու առանցքին՝ նվազեցնելու համար ազդեցությունները, սակայն ներառում է նաև գոյություն ունեցող համայնքային դաշտավայրերի շրջանցումներ: Ազդեցության ենթակա հողերի մեծամասնությունը վարելահողեր են կամ արոտավայրեր: Նախատեսվում է կառուցել 9 տրանսպորտային հանգույցներ, 16 ստորգետնյա գյուղատնտեսական անցումներ, որոնցից 3-ը հետիոտների և ընտանի կենդանիների համար, իսկ 13-ը գյուղատնտեսական տեխնիկայի համար, 93 հեղեղատար և ջրթող կառուցվածքներ, ինչպես նաև կամուրջներ:

³ ՏԾԻԿ-ը հանդիսանում է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի իրավահաջորդ կազմակերպությունը:

4. Տրանշ 3-ի Թալին-Լանջիկ 18.7 կմ (կմ 71+500 - կմ 90+200) հատվածի վերակառուցումն ու տեխնիկական հսկողությունը ֆինանսավորում է ԱՁԲ-ն (այսուհետ՝ ԱՁԲ հատված), իսկ Լանջիկ-Գյումրի 27.4 կմ (կմ 90+200 - կմ 117+670) հատվածի վերակառուցումն ու տեխնիկական հսկողությունը ֆինանսավորում է ԵՆԲ-ն (այսուհետ՝ ԵՆԲ հատված):
5. Տրանշ 3-ի և՛ ԱՁԲ հատվածում, և՛ ԵՆԲ հատվածում նախատեսվող շինարարական աշխատանքները պահանջում են մեծածավալ հողի օտարում և տարաբնակեցում: Թալին-Լանջիկ հատվածում նոր ճանապարհը կանցնի 5 գյուղական համայնքների 348 հողակտորներով՝ ազդեցության ենթարկելով 332 տնային տնտեսությունների (այսուհետ՝ ԱԵՏՏ-ներ) և 1,544 անձանց (այսուհետ՝ ԱԵԱ-ներ), ներառյալ՝ սեփականատերեր, վարձակալներ և չձևակերպված օգտագործողներ: Լանջիկ-Գյումրի հատվածում Տրանշ 3-ի շրջանակներում ճանապարհի նախատեսվող ազդեցությունն ավելի մեծ է՝ 9 գյուղական համայնքների 666 հողակտորներ, որի արդյունքում՝ 530 ԱԵՏՏ-ներ կամ 2,677 ԱԵԱ-ներ⁴:

Աղյուսակ 1. Տրանշ 3-ի ազդեցությունը բոլոր 6 ենթահատվածներում (ՀՕՏԾ-ների պլանային ցուցանիշներ)

N	Հատված	Համայնքներ, N	Ազդեցության մակերես, մ2	Հողակտորներ, N	ԱԵՏՏ, N	Խիստ ԱԵՏՏ, N	ԱԵԱ, N
1	Թալին-Լանջիկ (ԱՁԲ)	5	785,546.8	348	332	155	1,544
2	Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)	9	1,243,054.6	666	530	274	2,677

6. Ընդհանուր առմամբ, Տրանշ 3-ի ազդեցությունը տարածվում է Հայաստանի երկու մարզերի 12 գյուղական համայնքների վրա: Մասնավորապես, ԱՁԲ հատվածն ընդգրկում է Արագածոտնի մարզի Թալին, Ակունք, Մաստարա և Շիրակի մարզի Լանջիկ, Սառնաղբյուր համայնքները, իսկ ԵՆԲ հատվածը՝ Շիրակի մարզի Լանջիկ, Սառնաղբյուր, Ձորակապ, Մարալիկ, Հայրենյաց, Հոռոմ, Լուսակերտ, Բենիամին և Ագատան համայնքները (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Տրանշ 3-ի ՀՕՏԾ հատվածները, ենթահատվածները և ճանապարհային պիկետները

N	Համայնք	Հատված	Ճանապարհային պիկետներ	Ենթահատված
1	Թալին	Թալին-Լանջիկ (ԱՁԲ)	կմ 71+500 – կմ 74+020	5-րդ
2	Ակունք	Թալին-Լանջիկ (ԱՁԲ)	կմ 74+020 – կմ 74+900	5-րդ
3	Մաստարա	Թալին-Լանջիկ (ԱՁԲ)	կմ 74+900 – կմ 76+400	5-րդ
			կմ 76+400 – կմ 77+400	4-րդ
			կմ 77+400 – կմ 78+500	3-րդ
			կմ 78+500 – կմ 86+300	2-րդ
4	Սառնաղբյուր	Թալին-Լանջիկ (ԱՁԲ)	կմ 89+000 – կմ 90+200	1-ին
		Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)	կմ 90+200 – կմ 91+440	1-ին
5	Լանջիկ	Թալին-Լանջիկ (ԱՁԲ)	կմ 86+300 – կմ 90+200	1-ին
		Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)	կմ 90+200 – կմ 92+030	1-ին
6	Ձորակապ	Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)	կմ 92+030 – կմ 95+230	1-ին
			կմ 95+230 – կմ 98+485	2-րդ
7	Մարալիկ	Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)	կմ 97+700 – կմ 99+300	2-րդ
			կմ 99+300 – կմ 100+500	3-րդ
8	Հայրենյաց	Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)	կմ 100+500 – կմ 104+670	3-րդ
9	Հոռոմ	Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)	կմ 104+650 – կմ 105+465	4-րդ
			կմ 105+465 – կմ 107+165	4-րդ
10	Լուսակերտ	Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)	կմ 107+165 – կմ 108+620	4-րդ
			կմ 108+620 – կմ 109+620	5-րդ
11	Բենիամին	Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)	կմ 109+620 – կմ 110+600	5-րդ
			կմ 110+600 – կմ 111+900	6-րդ
12	Ագատան	Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)	կմ 111+900 – կմ 113+670	6-րդ
			կմ 113+670 – կմ 117+670	6-րդ

⁴ Համապատասխան հատվածների ՀՕՏԾ մշակման ընթացքում Թալին-Լանջիկ հատվածում անցկացված մարդահամարն անցկացվել է 332 ԱԵՏՏ-ներից միայն 239-ի հետ (72 տոկոս), իսկ Լանջիկ-Գյումրի հատվածում՝ 530 ԱԵՏՏ-ներից միայն 430-ի հետ (81 տոկոս), քանի որ ԱԵԱ-ների գտնվելու վայրը չի բացահայտվել, կամ բնակվել են արտերկրում կամ Հայաստանի այլ մարզերում: Արդյունքում, ԱԵԱ-ների բերվող թվաքանակները գնահատականներ են:

7. ՀՀ կառավարությունը Տրանշ 3-ի Թալին-Լանջիկ (ԱՂԲ հատված) և Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ հատված) հատվածների համար հաստատել է առանձին «Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագիր» (ՀՕՏԾ): ՀՕՏԾ-ների իրականացման վերջնական պատասխանատուն ՀՀ ՏԿՏՏՆ և ՏԾԻԿ-ն են:
8. Տրանշ 3-ի ՀՕՏԾ-ները նախատեսվում է իրականացնել 6 ենթահատվածներով, ընդ որում, յուրաքանչյուր ենթահատվածն ընդգրկում է և՛ ԱՂԲ, և՛ ԵՆԲ հատվածները: Շինարարական աշխատանքները կարող են մեկնարկվել միայն այն ենթահատվածներում, որտեղ ՀՕՏԾ-ների իրականացումն ամբողջությամբ ավարտված է:
9. Տրանշ 3-ի ՀՕՏԾ-ների իրականացման 3-րդ ենթահատվածն ընդգրկում է Մաստարա, Մարալիկ և Հայրենյաց համայնքներին հարող տարածքները: Ընդ որում, Տրանշ 3-ի 3-րդ ենթահատվածը կներառի ԱՂԲ ֆինանսավորմամբ իրականացվող հատվածից 1.1 կմ երկարությամբ ենթահատված (Մաստարա համայնք) և ԵՆԲ ֆինանսավորմամբ իրականացվող հատվածից 5.37 կմ երկարությամբ ենթահատված (Մարալիկ և Հայրենյաց համայնքներ) (տե՛ս աղյուսակներ 2 և 3):

Աղյուսակ 3. Տրանշ 3-ի 3-րդ ենթահատվածը

Հատված	Համայնք	Ճանապարհային պիկետներ	Երկարություն, մ
Թալին-Լանջիկ (ԱՂԲ)	Մաստարա	կմ 77+400 – կմ 78+500	1,100
Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)	Մարալիկ, Հայրենյաց	կմ 99+300 – կմ 104+670	5,370

բ) ՀՕՏԾ նպատակները և շրջանակը

10. Թալին-Լանջիկ հատվածի համար Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագիրը (ՀՕՏԾ) ՀՀ կառավարությունը հաստատել է 2015 թվականի սեպտեմբերին (թիվ N1196-Ն որոշում), իսկ Լանջիկ-Գյումրի հատվածի համար՝ 2016 թվականի հունվարին (թիվ N9-Ն որոշում): Երկու ՀՕՏԾ-ներն էլ հայերեն և անգլերեն տարբերակներով հասանելի են ՏԾԻԿ-ի պաշտոնական ինտերնետային կայքում⁵:
11. ՀՀ ՏԿՏՏՆ մշակած և ՀՀ կառավարության կողմից ընդունված ՀՕՏԾ-ների նպատակը Տրանշ 3-ի շրջանակներում Ծրագրի ազդեցության ենթարկված անձանց հայտնաբերելն ու աջակցելն է՝ նրանց կյանքի որակը և կենսակերպը վերականգնելու և առնվազն «մինչ-ծրագրային» մակարդակ հասցնելու համար:
12. Հաստատված ՀՕՏԾ-ները ներառում են հողի, բնակելի և ոչ բնակելի շենքի, շինության, մշակաբույսերի և ծառերի, եկամուտների, ձեռնարկատիրական գործունեության դադարեցման և աշխատատեղի մշտական կամ ժամանակավոր կորստի դեպքերում ազդեցության ենթարկված անձանց իրավունքների շրջանակը, ինչպես նաև Ծրագրի խիստ ազդեցության, ֆիզիկական վերաբնակեցման, խոցելիության նպաստների մասին, ժամանակավոր և չնախատեսված ազդեցությունների, բարելավումների փոխհատուցման մասին համապատասխան դրույթները: ՀՕՏԾ-ներում ներկայացվում է նաև հանրային գույքի կորստի դեպքում համայնքի իրավունքների շրջանակը:
13. Յուրաքանչյուր հատվածի ՀՕՏԾ-ն գնահատում է Ծրագրի ազդեցությունները և մանրամասնում պահանջվող փոխհատուցման և վերականգնման միջոցառումները՝ հիմք ընդունելով Տրանշ 3-ի ճանապարհի ծրագրի վերջնական մանրամասն նախագիծը, յուրաքանչյուր ազդեցության ենթակա հողակտորի համար իրականացված Մանրամասն չափագրման հետազոտությունը (ՄՉՀ), ԱԵՏՏ մարդահամարը⁶ և ԱԵՏՏ Սոցիալ-տնտեսական ընտրանքային հետազոտությունը⁷:

⁵ Տե՛ս. <http://northsouth.am>
⁶ Թալին-Լանջիկ հատվածում մարդահամար է անցկացվել 332 ԱԵՏՏ-ներից միայն 239-ի հետ (72 տոկոս), իսկ Լանջիկ-Գյումրի հատվածում՝ 530 ԱԵՏՏ-ներից միայն 430-ի հետ (81 տոկոս), քանի որ ԱԵՆ-ների գտնվելու վայրը չի բացահայտվել, կամ բնակվել են արտերկրում կամ Հայաստանի այլ մարզերում: Արդյունքում, ԱԵՆ-ների թվաքանակները գնահատականներ են:

14. Այսպիսով, Տրանշ 3-ի շրջանակներում վերաբնակեցումը, փոխահատուցումը և բարեկեցության վերականգնումը պետք է իրականացվի համաձայն երկու հատվածների համար հաստատված ՀՕՏԾ-ների:
15. ՀՕՏԾ իրականացումը և՛ Թալին-Լանջիկ, և՛ Լանջիկ-Գյումրի հատվածներում սկսվել է 2015 թվականի հուլիսի 29-ին: Արտաքին մոնիտորինգի տեսանկյունից ՀՕՏԾ իրականացման ավարտը համարվում է փոխահատուցման գումարի վերջին վճարման կամ ՀՕՏԾ դրույթներին համապատասխանող գումարը դատարանի դեպոզիտ հաշվին հանձնելու ամսաթիվը: Միևնույն ժամանակ, օտարման ընթացքում գտնվող դեպքերի համար ՀՕՏԾ իրականացումը կհամարվի հաջողությամբ ավարտված միայն հողերի օտարման մասին դատարանի որոշման ուժի մեջ մտնելուց և ԱՄԳ կողմից առանձին գրությամբ հաստատվելուց հետո: Եթե տվյալ ենթահատվածի արտաքին մոնիտորինգի արդյունքներով բացահայտվել կամ առաջարկվել է ճշգրտող միջոցառումների իրականացման պահանջ, ապա ՀՕՏԾ իրականացման ավարտը տվյալ ենթահատվածում կհամարվի ՏԾԻԿ-ի կողմից ճշգրտող միջոցառումների իրականացման ավարտը հավաստող պաշտոնական գրության ամսաթիվը:

գ) Տարաբնակեցման քաղաքականությունը. իրավական շրջանակ և իրավասություններ

16. Տարաբնակեցման պլանավորման և իրականացման իրավական հիմքը ՀՀ Սահմանադրությունն է և դրանից բխող համապատասխան ՀՀ օրենսդրական ակտերը: Քանի որ Ծրագիրն իրականացվում է միջազգային պայմանագրի (վարկային համաձայնագրեր) շրջանակներում ԱԶԲ և ԵՆԲ համաֆինանսավորմամբ, ուստի Ծրագրի իրականացման իրավական շրջանակը ներառում է նաև այդ կառույցների կողմից ոչ կամավոր տարաբնակեցման քաղաքականության դրույթները:
17. ՀՀ-ում սեփականության ոչ կամավոր օտարումը (հասարակության ու պետության կարիքների համար) հնարավոր է միայն օրենքով սահմանված կարգով ՀՀ կառավարության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահի որոշման ընդունման դեպքում: Օտարման հիմքերը, փոխահատուցման կարգը և այլ համապատասխան դրույթներ սահմանվում են «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով: Ընդ որում, այն տարածվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին սեփականության իրավունքով պատկանող սեփականության իրավունքի բոլոր օբյեկտների վրա:
18. «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքը սահմանում է ՀՀ-ում անշարժ գույքի գնահատման գործունեության իրականացման հիմունքները և կանոնակարգում այդ գործունեության հետ կապված հարաբերությունները:
19. Համաձայն ԱԶԲ Գործառնական ձեռնարկի (Operation Manual F1/OP (2013)) Տրանշ 3-ը դասակարգվում է որպես «Ա» կարգի ծրագիր, քանի որ նշանակալի ազդեցության են ենթարկվում (վերաբնակեցվում կամ կրում են արդյունավետ ակտիվների ավելի քան 10 տոկոսի կորուստ) 200 և ավել անձինք:
20. ՀՀ օրենսդրության և ԱԶԲ-ի քաղաքականության (ԱԲՀ 2009) միջև առկա են որոշակի տարբերություններ: Մասնավորապես, ԱԶԲ ԱԲՀ-ն նախատեսում է փոխահատուցման կամ առնվազն վերականգնման իրավունք նույնիսկ հողի սեփականության իրավունքի բացակայության պայմաններում (նաև չհաշվառված բնակիչների համար): ՀՀ օրենսդրությունը չի սահմանում օրինական օգտագործման իրավունք չունեցողների վրա ազդեցության դեպքերում վերականգնում կամ փոխահատուցում:
21. Բոլոր այն դեպքերում, երբ ԱԶԲ ԱԲՀ պահանջներն ավելի խիստ են քան ՀՀ օրենսդրության պահանջները, կիրառվել են ԱԶԲ քաղաքականության պահանջները: ՀՀ օրենսդրության և ԱԶԲ

⁷ ԱԵՏՏ սոցիալ-տնտեսական բնութագրերը ստացվել են ԱԵՏՏ-ներում իրականացված Սոցիալ-տնտեսական ընտրանքային հետազոտության միջոցով: ԱԶԲ հատվածում ընտրանքի ծավալը կազմել է 29 տոկոս, ԵՆԲ հատվածում՝ 30.6 տոկոս:

քաղաքականության միջև տարբերությունների հաղթահարման նպատակով մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակ (ՀՕՏՇ)⁸:

22. Տրանշ 3-ի երկու հատվածների համար ՀՕՏՇ-ները հիմնված են ԱԶԲ Անվտանգության քաղաքականության հայտարարագրի (ԱԲՀ 2009) վերաբնակեցման երաշխիքների մոդելի վրա: Ընտրությունը պայմանավորված է նրանով, որ ԱԶԲ քաղաքականությունն արդեն իսկ կիրառվել է Մ1 մայրուղու այլ հատվածների վերակառուցման համար, և միևնույն քաղաքականության պահպանումը կապահովի մայրուղու վերակառուցման յուրաքանչյուր հատվածում նմանատիպ գործառնական ստանդարտների պահպանումը: ԵՆԲ-ն համաձայնություն է տվել իր կողմից ֆինանսավորվող հատվածում հողերի օտարումը և տարաբնակեցումը իրականացնել ԱԶԲ ԱԲՀ (2009թ) հիման վրա:
23. Արդյունքում, Տրանշ 3-ի ՀՕՏՇ-ները հիմնված են Ծրագրի համար մշակված ՀՕՏՇ-ի, ՀՀ համապատասխան օրենքների և կարգավորումների, ինչպես նաև ԱԶԲ Անվտանգության քաղաքականության հայտարարագրի (ԱԲՀ 2009) պահանջների վրա:
24. Ազդեցության ենթակա հողամասերի և շինությունների գնահատումը հիմնված է փոխարինման արժեքի սակագների վրա:
25. Այսպիսով, Ծրագրի ազդեցության արդյունքում, համաձայն Ծրագրի համար մշակված ՀՕՏՇ-ի, փոխհատուցման ենթակա են.
 - 1) **հողի** կորուստ ունեցող անձինք, որոնք հանդիսանում են հողի սեփականատեր, օրինականացման ենթակա անձ, վարձակալ, այլ գույքային իրավունք (սերվիտուտի, կառուցապատման, գրավի, հիփոթեքի, օգտագործման) ունեցող,⁹
 - 2) հողի վրա գտնվող **բնակելի շենքերի, շինությունների** կորուստի դեպքում՝ բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ կառույցի նկատմամբ իրավունքների առկայությունից, վերաբնակեցվող վարձակալը,
 - 3) հողի վրա գտնվող **ոչ բնակելի շենքերի, շինությունների** կորուստի դեպքում՝ սեփականատերը, ինքնակամ կառույց իրականացրած ԱԵԱ-ն, վերաբնակեցվող վարձակալը, սակայն միայն շինությունների օրինականացումից/գրանցումից հետո,
 - 4) հողի վրա գտնվող **մշակաբույսերի, ծառերի և ստացվող բերքի** կորուստի դեպքում՝ բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ հողի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքներից,
 - 5) **ձեռնարկատիրական գործունեության դադարեցման** դեպքում՝ բոլոր ԱԵԱ-ները՝ անկախ հարկային հայտարարագրի ներկայացումից,
 - 6) **աշխատանքի կորստի** դեպքում՝ ազդակիր կազմակերպությունում կամ ԱԶ-ում աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատող անձինք,
 - 7) Ծրագրի **խիստ ազդեցության** դեպքում՝ գյուղատնտեսական նշանակության հողի 10 և ավելի տոկոսի կորուստ կրած և վերաբնակեցվող բոլոր ԱԵՏՏ/ԱԵԱ-ները, ներառյալ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները,
 - 8) **հանրային գույքի** կորուստի դեպքում՝ համայնքը,
 - 9) **վերականգնման օժանդակություն խոցելի անձանց՝** աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող, կանանց, տարեց կամ հաշմանդամ անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ-ները,
 - 10) **վերաբնակեցման օժանդակություն** (տեղափոխման նպատակով տրանսպորտային ծախսերը և ապրուստի միջոցները հոգալու համար)՝ բոլոր ազդակիրները,
 - 11) **ժամանակավոր ազդեցության** դեպքում՝ բոլոր ազդակիրները,

⁸ ՀՕՏՇ-ն հաստատվել է 2010-ին, այնուհետ վերանայվել 2012-ին, իսկ վերջնական վերանայված տարբերակը ՀՀ կառավարության կողմից հաստատվել 2015-ի սեպտեմբերին՝ թիվ N 1092-Ն որոշմամբ:

⁹ Չձևակերպված օգտագործողները կստանան փոխհատուցում միայն հողի վրա առկա բարելավումների համար:

- 12) **չնախատեսված ազդեցությունների** դեպքում՝ փոխհատուցման իրավունքներ ունեցող ԱԵԱ/ԱԵՏՏ-ներ,
- 13) **բարելավումների դեպքում** (որոնք վերևում ներառված չեն, սակայն առկա են ազդակիր հողամասի վրա (բացառությամբ՝ շարժական գույքի)՝ բարելավում կատարած ԱԵԱ-ները:

Աղյուսակ 4. Հողերի կորստի դիմաց դրամական փոխհատուցման հաշվարկը

Փոխհատուցման օբյեկտ/անձ	Հաշվարկ
Մասնավոր կամ համայնքային հողեր	Վերականգնման ծախս +15%
Օրինականացման ենթակա հողօգտագործող	Վերականգնման ծախս+15% (օրինականացումից հետո ¹⁰)
Համայնքային կամ պետական հողերի վարձակալներ, վարձակալության մնացած տարիների համար	Մինչև 1 տարի - (վերականգնման ծախս +15%) * 0.05
	Մինչև 15 տարի - (վերականգնման ծախս +15%) * 0.14
	Մինչև 25 տարի - (վերականգնման ծախս +15%) * 0.20
	25 տարի - (վերականգնման ծախս +15%) * 0.25

Աղբյուրը՝ Տրանշ 3-ի ՀՕՏԾ-ներ

26. Փոխհատուցման իրավունքը սահմանափակվում է կասեցման ամսաթվով, որը օտարվող սեփականության նկարագրության արձանագրության կազմման օրն է (արձանագրությունների ստորագրումը ԱԵԱ-ների, ՏԿՏՏՆ, Ձեռքբերողի կողմից)¹¹, որտեղ արձանագրվում են իրականացված մարդահամարի, մանրամասն չափագրման հետազոտության և ազդեցությունների գնահատման տվյալները: Ծրագրի ԱԶԲ հատվածում կասեցման ամսաթիվը 2015 թվականի ապրիլի 27-ն է, իսկ ԵՆԲ հատվածում՝ 2015 թվականի հունիսի 4-ը:

դ) Մոնիտորինգ և գնահատում

27. ՀՕՏԾ իրականացումը ենթակա է և՛ ներքին, և՛ արտաքին մոնիտորինգի: Ներքին մոնիտորինգը իրականացվում է ՏԾԻԿ-ի Տարաբնակեցման համակարգող թիմի կողմից:
28. Թալին-Լանջիկ հատվածի ներքին մոնիտորինգի արդյունքներն ամփոփվում են Սոցիալական մոնիտորինգի կիսամյակային հաշվետվություններում (ՍՄԿ) և Եռամսյակային առաջընթացի հաշվետվություններում (ԵԱՀ), որոնք ներկայացվում են ԱԶԲ:
29. Լանջիկ-Գյումրի հատվածի ներքին մոնիտորինգի արդյունքներն ամփոփվում են Բնապահպանության և սոցիալական մոնիտորինգի կիսամյակային հաշվետվություններում (ԲՍՄԿ) և Եռամսյակային առաջընթացի հաշվետվություններում (ԵԱՀ), որոնք ներկայացվում են ԵՆԲ:
30. Արտաքին մոնիտորինգն իրականացվում է անկախ խորհրդատուի կողմից: Այն ենթադրում է համապատասխանության ուսումնասիրությունների իրականացում և դրա հիման վրա յուրաքանչյուր ենթահատվածի համար «Համապատասխանության հաշվետվության» մշակում և ներկայացում:
31. Արտաքին մոնիտորինգի նպատակն է հավաստիանալ, որ փոխհատուցման ծրագիրն իրականացվել է Տրանշ 3 ՀՕՏԾ/ՀՕՏԾ-ների դրույթներին համապատասխան, համահունչ է ԱԶԲ Անվտանգության քաղաքականության հայտարարագրին և ուղեցույցներին, (Լանջիկ-Գյումրի հատվածում նաև ԵՆԲ-ի Սոցիալական ստանդարտների ու սկզբունքների հայտարարագրին և Պարտադրված

¹⁰ Օրինականացումը ԱԵԱ-ների պատասխանատվությունն է: Այն հողօգտագործողները, որոնց իրավունքները չեն կարող օրինականացվել, կստանան փոխհատուցում միայն հողի վրա առկա բարելավումների համար:

¹¹ Համաձայն Ծրագրի ՀՕՏԾ-ի «Օտարվող սեփականության նկարագրության արձանագրության կազմման օրվանից հետո կատարված բարելավումների համար փոխհատուցում չի տրվում, բացառությամբ Օրենքով և ՀՕՏԾ-ով նախատեսված դեպքերի»: Այնուամենայնիվ, ՀՕՏԾ-ում նկարագրված որոշ դեպքերի համար կասեցման ամսաթիվը տարբեր է, մասնավորապես. (i) 6 ամսվա միջին աշխատավարձի չափով փոխհատուցում կտրամադրվի այն աշխատողներին, որոնք մշտապես կորցրել են իրենց աշխատանքը, սակայն աշխատել են կասեցման ամսաթվից առնվազն 2 ամիս առաջ, (ii) այն ԱԵՏՏ-ները, որոնք սոցիալապես խոցելի լինելու իրենց կարգավիճակը հավաստող փաստաթղթեր կներկայացնեն հողի օտարման օրվանից առաջ, ենթակա կլինեն վերականգնման օժանդակություն ստանալուն որպես խոցելի ԱԵՏՏ-ներ, (iii) ՀՕՏԾ իրականացման ընթացքում օրինականացված և սեփականության իրենց իրավունքը վերականգնած ԱԵՏՏ-ները նույնպես ենթակա են վերականգնման օժանդակություն ստանալուն որպես խոցելի ԱԵՏՏ-ներ համապատասխան փաստաթղթերի ներկայացման պարագայում:

վերաբնակեցման ուղեցույցին), արժանացել է ԱԵԱ-ների գոհունակությանը, ըստ անհրաժեշտության՝ առաջ քաշել ճշգրտող միջոցառումներ ու առաջարկություններ:

32. «Համապատասխանության հաշվետվության» հաստատումը հիմք է ծառայելու տվյալ ենթահատվածում շինարարական աշխատանքների մեկնարկի թույլտվության համար:
33. Ծրագրի արտաքին մոնիտորինգն իրականացնում է «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը» (այսուհետ՝ ՏՀՀԿ), որը հանրային ծրագրերի մոնիտորինգի և գնահատման աշխատանքներում մասնագիտացված անկախ հետազոտական կառույց է¹²: ՏՀՀԿ-ն հանդիսանում է Տրանշ 3-ի «Արտաքին մոնիտորինգի գործակալությունը» (ԱՄԳ):
34. Արտաքին մոնիտորինգի ուսումնասիրությունները ներառել են քանակական և որակական հետազոտության տարբեր մեթոդներ: Իրականացվել են դաշտային և գրասենյակային ուսումնասիրություններ: Սույն հաշվետվության հաջորդ բաժնում բերվում են արտաքին մոնիտորինգի մեթոդաբանության մանրամասները, իսկ հաջորդող բաժիններում ներկայացվում են արտաքին մոնիտորինգի արդյունքները և հիմնական եզրակացությունները Տրանշ 3-ի 3-րդ ենթահատվածի համար:

¹² Կենտրոնի մասին մասնրամասների համար տես՝ www.EDRC.am

III. ԱՄԳ մեթոդաբանությունը

35. Համապատասխանության վերլուծության մեթոդաբանական հիմքը ներկայացվել է Նախնական հաշվետվությունում: Ըստ այդմ, ԱՄԳ-ն իրականացրել է մեթոդաբանությամբ նախատեսված բոլոր հնարավոր գործողությունների շարքը: Համապատասխանության ուսումնասիրությունը ներառել է քանակական և որակական հետազոտության խառը մեթոդներ: Իրականացվել են գրասենյակային և դաշտային ուսումնասիրություններ:
36. ԱՄԳ-ն ուսումնասիրել է հաստատված ՀՕՏԾ-ն և ՀՕՏԾ-ները, հավաքագրել և համադրել անհրաժեշտ տեղեկատվությունը, վերանայել է ծրագրային փաստաթղթերը (ֆինանսական և ոչ ֆինանսական), վերլուծել է առկա տվյալների բազաները, իրականացրել է տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտություն, կազմակերպել է հարցազրույցներ հիմնական իրազեկ անձանց և անմիջապես ԱԵԱ-ների հետ:
37. Տվյալների հավաքման համար կիրառվել են մասնավորապես 3 հիմնական մեթոդներ.
- Տվյալների բազաների վերլուծություն և փաստաթղթերի քննություն,
 - Հիմնական տեղեկացված անձանց հետ հարցազրույցներ,
 - ԱԵՏՏ-ների վիճակագրական ընտրանքային հետազոտություններ:
38. Գրասենյակային ուսումնասիրությունների ընթացքում ՏՀԿ աշխատանքային խումբը հավաքագրել և համադրել է անհրաժեշտ տեղեկատվությունը, ուսումնասիրել, քննել է ֆինանսական և ոչ ֆինանսական ծրագրային փաստաթղթերը (ներառյալ՝ ԱԶԲ ԱԲՀ-2009 ձեռնարկ, ՀՕՏԾ, ՀՕՏԾ-ներ), վերլուծվել են առկա տվյալների բազաները:
39. Մասնավորապես, հիմնական ուսումնասիրության առարկա են դարձել հետևյալ փաստաթղթերը.
- **Նկարագրության արձանագրությունները**, որոնք ներառում են ազդեցության ենթարկված ակտիվների նկարագրությունը, այն է՝ հողակտորների, մշակաբույսերի, ծառերի, շենք, շինությունների և այլ անշարժ գույքի, ձեռնարկատիրական գործունեության նկարագրությունը:
 - **Գնահատման հաշվետվությունները**, որտեղ արտոնագրված գնահատողների կողմից ներկայացվում են օտարման ենթակա ակտիվների գնահատման արդյունքները:
 - **Վերականգնման օժանդակությունների չափի որոշման հաշվետվությունները**, որտեղ արտոնագրված գնահատողների կողմից ներկայացվում են Ծրագրի խիստ ազդեցության ենթարկված, սոցիալապես խոցելի անձանց/ԱԵՏՏ-ներին տրամադրվող վերականգնման օժանդակությունների հաշվարկը:
 - **Սեփականության օտարման մասին պայմանագրերը**, որտեղ նշվում են օտարվող հողակտորի ծածկագիրը, մակերեսը, փոխհատուցման և օժանդակության ենթակա կորտի տեսակը, փոխհատուցման և օժանդակության չափը, ստացողը՝ սեփականատերը (վարձակալը, չձևակերպված օգտագործողը), բանկային հաշվեհամարը և այլն:
 - **Վճարման հանձնարարագրերը**, որտեղ նշվում են փոխհատուցման նպատակը, ամսաթիվը, գումարի չափը, ստացողի տվյալները:
 - **Ներքին մոնիտորինգի հաշվետվությունները**. ՏԾԻԿ-ի կողմից տրամադրվել է «Տրանշ 3-ի ՀՕՏԾ 3-րդ ենթահատվածի ավարտական հաշվետվությունը» (պատրաստված Իրականացնող խորհրդատուի կողմից): Իրականացնող խորհրդատուն (Millennium Development Ltd և Uptime Ltd համատեղ ձեռնարկություն) պատասխանատու է Տրանշ 3-ի ՀՕՏԾ-ների ամբողջական իրականացման համար, ներառյալ՝ դատական կարգով օտարման փուլը:
 - Այլ փաստաթղթեր և տվյալների բազաներ:

40. Ուսումնասիրվել են 3-րդ ենթահատվածի համայնքների ԱԵԱ-ների փաստաթղթային փաթեթների 30 տոկոսը (պատահականորեն ընտրված): Միևնույն ժամանակ, հավաստիանալու համար, որ փոխհատուցումը վճարվել է բոլոր ԱԵԱ-ներին, ԱՄԳ-ն ուսումնասիրել է սույն հաշվետվության պատրաստման դրությամբ փոխհատուցված ԱԵԱ-ների վճարման հանձնարարագրերի 100 տոկոսը: Հարկադիր օտարման գործընթացում գտնվող բոլոր ԱԵԱ-ների համար ստուգվել են դեպոզիտային վճարման հանձնարարագրերը, որով հաստատվել է յուրաքանչյուր ԱԵԱ-ի համար հողի (և այլ ակտիվների) օտարման դիմաց հաշվարկված փոխհատուցման ենթակա գումարի՝ դատարանի դեպոզիտ հաշվին հանձնելը:
41. Վերլուծվել են առկա տվյալների բազաները և համեմատվել ծրագրային մյուս փաստաթղթերում ազդեցության ենթակա ակտիվների վերաբերյալ և ԱԵՏՏ/ԱԵԱ-ներին վերաբերվող տեղեկատվությունը:
42. Բոլոր պայմանագրերի և վճարումը հավաստող փաստաթղթերի առկայության հետ մեկտեղ, ստուգվել է դրանցում նշված տեղեկատվության համադրելիությունը և համապատասխանությունը, մասնավորապես (1) բոլոր սեփականատերերի ստորագրության առկայությունը, (2) հողի դիմաց փոխհատուցման և լրացուցիչ փոխհատուցման համապատասխանությունը, (3) բանկային հաշվեհամարների համապատասխանությունը, (4) փաստաթղթերի վավերականացման (գործողությունների իրականացման) ամսաթվերի համապատասխանությունը գործող կարգին (իրականացման ժամանակացույցին):
43. Գրասենյակային, ինչպես նաև ԱԵԱ-ների սուբյեկտիվ սպասումների ուսումնասիրությունները ներառել են հանրային լուսնների և խորհրդատվության, բողոքների լուծման մեխանիզմի, ինստիտուցիոնալ կազմակերպման, փոխհատուցման հաշվարկման և վճարման գործընթացները:
44. Մոնիտորինգի ընթացքում հարցազրույցներ են իրականացվել հիմնական իրազեկ անձանց հետ, որոնք ներառել են ՏԾԻԿ աշխատակիցները, պաշտոնյաները և խորհրդատուները, ինչպես նաև, ՏԻՄ ներկայացուցիչները:
45. 3-րդ ենթահատվածի համայնքների ԱԵՏՏ-ների ցանկից պատահականության սկզբունքով ընտրվել է 33 տոկոսը: Ընտրված ԱԵՏՏ-ներում անցկացվել է վիճակագրական ընտրանքային հետազոտություն՝ որպես դեմ առ դեմ հարցազրույցի գործիք կիրառելով Համապատասխանության հաշվետվության հարցաթերթը (մեթոդաբանության մանրամասները և հարցաթերթը ներկայացված են ԱՄԳ Սկզբնական հաշվետվությունում): Արդյունքները մուտքագրվել են տվյալների բազա և վերլուծվել:

Աղյուսակ 5. Տրանշ 3-ի 3-րդ ենթահատվածի Համապատասխանության հետազոտության ընտրանքը

Հատված/համայնք	Ընդամենը ԱԵՏՏ-ներ	Ընտրանք, ԱԵՏՏ-ներ
Թալին-Լանջիկ (ԱԶԲ)	61	19
Մաստարա	61	19
Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)	59	21
Հայրենյաց	24	9
Մարալիկ	35	12
Ընդամենը	120	40

Աղբյուրը՝ ՏՀՀԿ, 2016

46. Տարբեր աղբյուրներից ստացված տվյալները և տեղեկատվությունը վերլուծվել ու համադրվել են, որը թույլ է տվել գնահատել գործընթացը, հավաստիանալ և փոխստուգել փոխհատուցման ստացման փաստը, ինչպես նաև բացահայտել առկա խնդիրները և բացերը: Անհրաժեշտության դեպքում, անմիջական կապ է հաստատվել ԱԵԱ-ների հետ և իրականացվել լրացուցիչ ճշգրտումներ:
47. Կիրառված մեթոդաբանությունը և ստացված արտաքին մոնիտորինգի արդյունքները թույլ են տվել եզրակացնել տվյալների հավաստիության, տեղեկատվության ամբողջականության և ճշգրտության, վերաբերյալ, ինչպես նաև՝ փոխհատուցման ծավալների համապատասխանության և գործընթացի արդյունավետության մասին:
48. Մշակվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ: Մոնիտորինգի արդյունքները արտահայտված են սույն Համապատասխանության հաշվետվությունում:

IV. ՀՕՏԾ իրականացման ընթացակարգերը

ա) Ինստիտուցիոնալ կառուցվածք և կառավարում

49. Ծրագրի ինստիտուցիոնալ շրջանակը ներառում է մի շարք կազմակերպություններ և կառույցներ, որոնց դերակատարումը և պատասխանատվության շրջանակը ներկայացված են ՀՕՏԾ-ներում: Ծրագրի կառավարման խորհուրդը, որը կազմված է ՀՀ վարչապետի նախագահությամբ շահառու նախարարությունների ներկայացուցիչներից, ստեղծվել է Ծրագիրը վերահսկելու և ռազմավարական որոշումներ կայացնելու նպատակով: Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը (ՏԿՏՏՆ) հանդիսանում է Ծրագրի Գործադիր մարմինը, որը կրում է ամբողջական և ընդհանուր պատասխանատվություն Ծրագրի համար: ՏԿՏՏՆ-ն իր պարտավորությունները իրականացնում է «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի (ՏԾԻԿ) միջոցով: ՏԾԻԿ-ը հանդիսանում է Ծրագրի Իրականացնող գործակալությունը և պատասխանատու է Հողերի օտարման և տարաբնակացման պլանավորման և իրականացման համար:
50. Ծրագրի ինստիտուցիոնալ շրջանակը ներառում է նաև մի շարք այլ ՀՀ պետական մարմիններ (նախարարություններ, մարզպետարաններ, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե), ՏԻՄ-եր, խորհրդատուներ, Բողոքների քննման խումբը, ինչպես նաև ԱԶԲ-ն և ԵՆԲ-ն:
51. Տրանշ 3-ի նախագծային աշխատանքներն իրականացնում է ֆրանսիական Egis International ընկերությունը, իսկ Շինարար կապալառուն չինական Sinohydro Corporation ընկերությունն է:
52. Շինարարության տեխնիկական վերահսկողությունն իրականացնող խորհրդատուն Spea Ingegneria Europea S.p.A. and IRD Engineering S.r.L. իտալական համատեղ կազմակերպությունն է: Այն պատասխանատու է շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության համար և պետք է երաշխավորի դրանց համապատասխանությունը Ծրագրի հաստատված նախագծին՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելով առաջարկություններ նախագծային լուծումների վերաբերյալ, ապահովի սոցիալական և բնապահպանական պահանջների ապահովումը, որի համար հաշվետվություններ է ներկայացնելու շինարարության ամբողջ ընթացքում:
53. ՀՕՏԾ Իրականացնող խորհրդատուն (Millennium Development Ltd և Uptime Ltd համատեղ ձեռնարկություն) պատասխանատու է Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի հատվածների ՀՕՏԾ-ների ամբողջական իրականացման համար, ներառյալ՝ դատական կարգով օտարման փուլը: Իրականացնող խորհրդատուն իր կազմում ունի նաև համապատասխան մասնագիտական թիմ, որը պատասխանատու է ՀՕՏԾ իրականացման ընթացքում ազդեցությունների հնարավոր փոփոխությունների և նախագծային փոփոխությունների արդյունքում նոր ազդակիր հողերի և փոփոխված ազդեցությունների դեպքում օտարման հետ կապված համապատասխան գործողությունների (չափագրում, գնահատում և այլն) իրականացման համար: Իրականացնող խորհրդատուն պետք է ներկայացնի ամսական հաշվետվություններ և Ավարտական հաշվետվություն՝ յուրաքանչյուր ՀՕՏԾ ենթահատվածի համար:
54. ՏԾԻԿ-ն իր կազմում ձևավորել է Տարաբնակեցման համակարգող թիմ¹³, որը պատասխանատու է Իրականացման խորհրդատուի աշխատանքների համակարգման և ՀՕՏԾ իրականացման ներքին մոնիտորինգի, «Բնապահպանության և սոցիալական մոնիտորինգի կիսամյակային հաշվետվությունների» և «Եռամսյակային առաջընթացի հաշվետվությունների» ներկայացման համար:

Հիմնական բացահայտումներ

Տրանշ 3-ի ենթահատված 3-ում ՀՕՏԾ-ների իրականացման ինստիտուցիոնալ կառուցվածքը և կառավարումը համապատասխանել է սահմանված դրույթներին:

¹³ Կազմը ներառում է հետևյալ մասնագետների. 1) իրավական և արտաքին ազդեցության ղեկավար, 2) արտաքին ազդեցության և վերաբնակեցման համակարգող, 3) սոցիալական զարգացման և վերաբնակեցման մասնագետ, 4) բնապահպանության և հնագիտության մասնագետ, 5) գլխավոր իրավախորհրդատու և բողոքների ու վեճերի կառավարման մասնագետ, 6) ազգային դաշտային աշխատանքների համակարգող (խորհրդատու) և 7) ՀՕՏ իրավական մասնագետ (խորհրդատու):

բ) Հանրային լսումներ և ԱԵԱ իրազեկում

55. Հանրային լսումների և ԱԵԱ իրազեկման գործընթացը սկսվել է նախքան ՀՕՏԾ իրականացումը: Մասնավորապես, Թալին-Լանջիկ հատվածում հանրային լսումները կազմակերպվել են 2014 թվականի փետրվարի 19-ից 21-ը, իսկ Լանջիկ-Գյումրի հատվածում՝ 2014 թվականի փետրվարի 19-ից հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
56. Այդ հանդիպումներին մասնակցել են ՏԾԻԿ-ի սոցիալական ազդեցության և վերաբնակեցման մասնագետը, ՀՕՏԾ մշակման սոցիալական ազդեցության և վերաբնակեցման ազգային խորհրդատուն, ճանապարհների և կամուրջների մասնագետը, գլխավոր իրավախորհրդատու և բողոքների ու վեճերի կառավարման մասնագետը, ինչպես նաև ՀՕՏԾ մշակման ԱԶԲ-ի կողմից վարձված խորհրդատու հանդիսացող «Գնահատողների միություն» ՓԲԸ ներկայացուցիչները:
57. Հանդիպումների ընթացքում ԱԵԱ-ներին ներկայացվել են ՀՕՏԾ գործընթացի կազմակերպման և իրականացման ընթացքը, փուլերը, ԱԵԱ-ների իրավունքներն ու պարտականությունները, փոխհատուցման հաշվարկման սկզբունքները, պարզաբանվել է բողոքների լուծման մեխանիզմը, ներկայացվել մոնիտորինգի գործընթացը: ԱԵԱ-ներին բաժանվել են Ծրագրի իրականացման հիմնական փուլերի վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ և Ծրագրի տեղեկատվական ձեռնարկը: Հանրային լսումների ժամանակ ԱԵԱ-ների բարձրացրած հիմնական հարցադրումները վերաբերել են ՀՕՏԾ Իրավասությունների մատրիցին և փոխհատուցման մեխանիզմներին, կորուստների տարբեր տեսակների գնահատման մեթոդաբանությանը, օրինականացման և կադաստրին առնչվող խնդիրներին, ինչպես նաև ՀՕՏԾ իրականացման տարբեր փուլերում ԱԵԱ իրավունքներին և հնարավորություններին: ՀՕՏԾ բովանդակության, ԱԵԱ-ներին ՏԾԻԿ-ի տրամադրած տեղեկատվական թերթիկների և ծանուցումների գրասենյակային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրային լսումների ընթացքում բարձրացրած խնդիրները իրենց լուծումն են ստացել վերջնական ՀՕՏԾ-ում և/կամ ՀՕՏԾ իրականացման ժամանակ:
58. Հանրային լսումներն անցկացվել են ԱԵԱ-ների համար հասանելի վայրերում՝ համայնքների ՏԻՄ գրասենյակներում, մշակույթի կենտրոններում: Ազդեցության ենթակա բոլոր համայնքների ղեկավարները պաշտոնապես տեղեկացվել են լսումների իրականացման ժամանակացույցին և օրակարգին և աջակցել են ԱԵԱ իրազեկմանը: Համայնքների ղեկավարներին նախապես տրամադրվել են ԱԵԱ-ների ցուցակները՝ ԱԵԱ-ների կամ իրենց լիազոր ներկայացուցիչների մասնակցությունն ապահովելու համար: Հատուկ ուշադրություն է դարձվել կանանց և խոցելի ԱԵԱ-ների մասնակցությանը, որոնց ցուցակները ևս նախապես տրամադրվել են համայնքի ղեկավարներին: Հանրային լսումների վերաբերյալ հայտարարությունները նախապես տեղակայվել են Ծրագրի ինտերնետային կայքում:
59. Իրականացման փուլի ամբողջ ընթացքում իրավաբանական և կազմակերպչական հարցերում ԱԵԱ-ներին տրամադրվել է ամենօրյա խորհրդատվություն և աջակցություն: Մասնավորապես, մահացած սեփականատերերի դեպքում կարգավորվել է ժառանգության իրավունքի վերականգնման գործընթացը, սեփականատիրոջ երկրից բացակայելու դեպքում՝ կարգավորվել է լիազորագրի տրամադրումը:
60. Տեղեկատվության տարածման շրջանակներում իրականացված գործողությունները ներառել են.
- ՀՀ օրենքով նախատեսված ծանուցումների տրամադրումը ԱԵԱ-ներին. (i) սեփականությունը բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին ծանուցում, (ii) հողամասի հատակագիծ, (iii) նկարագրության արձանագրություն, (iv) օտարման պայմանագրի նախագիծ, (v) գումարը դեպոզիտ հանձնելու վերաբերյալ ծանուցում,
 - Տեղեկատվական թերթիկների մշակումը և տարածումը (ներառում է տեղեկատվություն կողմերի իրավունքներն ու պարտականությունները, փոխհատուցման գնահատման սկզբունքների, պայմանագիր կնքելու և փոխհատուցում ստանալու, փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելով օտարման գործընթացի, ինչպես նաև բողոքների լուծման մեխանիզմի վերաբերյալ),

- Ծրագրի տեղեկատվական ձեռնարկի հրապարակումը և տարածումը¹⁴,
- ՀՕՏԾ-ի, ՀՕՏԾ նախագծերի և վերջնական ՀՕՏԾ-ների հրապարակումը¹⁵:

61. Վերոհիշյալ տեղեկատվությունը ձեռք է բերվել և վերստուգվել է. (1) գրասենյակային ուսումնասիրությունների արդյունքում՝ հիմք ընդունելով հետևյալ փաստաթղթերը. համապատասխան հատվածների ՀՕՏԾ-ներ՝ ներառյալ բոլոր հանրային լուսմների սղագրությունները, ինչպես նաև Իրականացնող խորհրդատուի «Տրանշ 3-ի ՀՕՏԾ 3-րդ ենթահատվածի ավարտական հաշվետվությունը»: (2) ԱՄԳ Համապատասխանության հետազոտության հարցման արդյունքների հիման վրա. Հարցման արդյունքների համաձայն բոլոր ԱԵՏՏ-ների 77.5 տոկոսն է իրազեկված եղել իրենց համայնքում կազմակերպված Հանրային լուսմների և խորհրդատվությունների մասին: Հանրային լուսմներին և խորհրդատվություններին մասակցել են տեղեկացված ԱԵՏՏ-ների 87 տոկոսը, որոնց մեկ երրորդն այդ գործընթացը համարել է շատ օգտակար: Բոլոր ԱԵՏՏ-ները հաստատել են, որ փոխհատուցման գումարի և սկզբունքների վերաբերյալ ստացել են պաշտոնական ծանուցում, մանրամասն չափագրման հետազոտության և ազդեցությունների գնահատման տվյալները ԱԵՏՏ-ներին ուղարկվել են փոստով (նկարագրության արձանագրություն, քարտեզներ, այլ): Համապատասխանության հարցման արդյունքները ներկայացված են «Հանրային գոհունակությունը» բաժին VIII-ում:

Հիմնական բացահայտումներ

Տրանշ 3-ի ենթահատված 3-ում Հանրային լուսմների և ԱԵԱ իրազեկման գործընթացը կազմակերպվել է ՀՕՏԾ դրույթներին համապատասխան:

գ) Բողոքներ և բողոքարկման մեխանիզմ

62. ՀՕՏԾ-ի իրականացմանը վերաբերվող տարածայնությունների և բողոքների արդյունավետ և արագ լուծման նպատակով մշակվել է Բողոքների լուծման մեխանիզմ (ԲԼՄ), որը ԱԵԱ-ներին ներկայացվել է հանրային լուսմների ընթացքում: Այն ներկայացված է նաև Ծրագրի տեղեկատվական ձեռնարկում: Բողոքների լուծման մեխանիզմում ներգրավված են՝ ՏԾԻԿ-ը, Բողոքների քննման խումբը (ԲՔԽ) և պետական լիազոր մարմինը (ՏԿՏՏՆ):

63. Բողոքարկման մեխանիզմը ներառում է հետևյալ 3 փուլերը.

- Առաջին փուլում փորձ է արվում բողոքը լուծել ՏԾԻԿ մակարդակում: ԱԵԱ-ները դիմում-բողոքները կարող են ներկայացնել ՏԻՄ կամ Բողոքների առանցքային անձին (ԲԱԱ): ԲԱԱ-ն Իրականացնող խորհրդատուի թիմի բողոքների համակարգողն է, ով նախապես սահմանված ժամանակացույցի հիման վրա ընդունում է գրավոր դիմում-բողոքները: ԲԱԱ և ԲԼՄ վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը ներառված է ՀՕՏԾ տեղեկատվական թերթիկում, որը տրամադրվում է ԱԵԱ-ներին իրականացման գործողությունների սկզբում: Իրականացման գործընթացն ըստ համայնքների բաժանված է Իրականացնող խորհրդատուի մասնագետների միջև, այնպես որ ՀՕՏԾ իրականացման ընթացքում համայնքներում գրեթե միշտ հասանելի է առաջադրված 1 կամ 2 անձ: Բացի այդ, Իրականացնող խորհրդատուի, ինչպես նաև ՏԾԻԿ համապատասխան մասնագետների կոնտակտային տվյալները ներառված են տեղեկատվական թերթիկում, որը պայմանագրերի նախագծերի հետ մեկտեղ տրամադրվել է ԱԵԱ-ներին՝ մշտապես հասանելի լինելու համար: ՏԻՄ գրասենյակներում գրավոր դիմում-բողոքներն ընդունում է ՏԻՄ-ի կողմից նշանակված պատասխանատու ներկայացուցիչը, ով գրավոր դիմում-բողոքները փոխանցում է ԲԱԱ-ին:

ՏԻՄ գրասենյակը և ԲԱԱ-ն պատասխանատու են ԱԵԱ-ներից բողոքները, դիմումները, խնդրանքներն ընդունելու, գրանցելու և, ստանալուց առավելագույնը 5-օրյա ժամկետում, բոլոր պահանջվող փաստաթղթերը ՏԾԻԿ փոխանցելու համար: Միևնույն ժամանակ սույն հնարավորությունը չի

¹⁴ <http://northsouth.am/am/publications>

¹⁵ <http://northsouth.am/am/categories/show/112>

սահմանափակում քաղաքացու իրավունքը իր բողոքը, դիմումը, խնդրանքը անմիջապես ՏԾԻԿ և/կամ ՏԿՏՏՆ ներկայացնելու համար: ԾԻԿ-ը գրանցում և քննում է ստացված գրավող բողոքները և արդյունքների վերաբերյալ գրավոր տեղեկացնում ԱԵԱ-ին (բողոքը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում):

Եթե բողոքը շարունակվում է, ապա դիմում-բողոքը ներկայացվում և քննարկվում է Բողոքների քննման խմբում (ԲՔԽ), որում ընդգրկված են նաև ՏԻՄ-ի և ՀԿ ներկայացուցիչներ: ԲՔԽ-ի որոշման հիման վրա ՏԾԻԿ-ը ԱԵԱ-ին ուղարկում է արդյունքների վերաբերյալ գրավոր պատասխան՝ բողոքը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում: Ըստ անհրաժեշտության յուրաքանչյուր դեպքի համար ԲՔԽ-ի ձևավորման մասին տեղեկատվությունը հրապարակվում է ՏԾԻԿ-ի պաշտոնական կայքում: Նախքան ԲՔԽ-ի ձևավորումը դեպքի մասին համապատասխան տեղեկատվությունը տրամադրվում է ԱԵԱ-ին և համայնքին, այնպես որ յուրաքանչյուր շահագրգիռ ՀԿ կարող է ընդգրկվել ԲՔԽ-ի կազմում՝ ներկայացնելով համապատասխան առաջարկ: Այնուամենայնիվ 3-րդ ենթահատվածի իրականացման ընթացքում նման նախադեպ տեղի չի ունեցել:

- Երկրորդ փուլում (ՏԿՏՏՆ մակարդակ), երբ ԲՔԽ-ի որոշումը չի բավարարում ԱԵԱ-ին, ԱԵԱ-ն կարող է բողոքը ներկայացնել ՏԿՏՏՆ: ՏԿՏՏՆ-ն, բողոքը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում, արդյունքների վերաբերյալ գրավոր պատասխանում է ԱԵԱ-ին:
- Երրորդ փուլում (դատարան), երբ նախորդ փուլերը ձախողվել են, ԱԵԱ-ը դիմում է դատարան: Ընդհանուր առմամբ, ԲԼՄ ցանկացած փուլում ԱԵԱ-ն իրավունք ունի գործը ներկայացնել ընդհանուր իրավասության դատարան՝ իր բողոքի լուծման նպատակով:

64. Բողոքների լուծման մեխանիզմը գնահատելու նպատակով ԱՄԳ-ն ծանոթացել է 3-րդ ենթահատվածում բոլոր դիմում-բողոքներին և ուսումնասիրել դրանք:

65. Թային-Լանջիկ (ԱԶԲ) հատվածի 3-րդ ենթահատվածում ՀՕՏԾ իրականացման արդյունքներով ստացվել է 1 դիմում-բողոք (1 ԱԵՏՏ, Մաստարա, ծածկագիր՝ 02-069-0345-0229): Դիմում-բողոքը ներկայացվել է ՏԾԻԿ և քննարկվել է սահմանված ժամկետներում:

Բողոքը բավարարվել է՝ հիմք ընդունելով ԱԵՏՏ-ների խոցելի հանդիսանալու փաստաթղթերի առկայությունը: (ii) 1 բողոք վերաբերել է ԱԵԱ-ի ցանկությանը հողամասն օտարել ամբողջությամբ, քանի որ հողակտորի չօտարված մասը մշակման համար այլևս պիտանի չէր: Այնուամենայնիվ, բողոքը մերժվել է, քանի որ ներկայացվել էր բողոքների ներկայացման համար սահմանված ժամկետից 20 ամիս ուշացմամբ¹⁶ («Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի (հոդված 5) համաձայն դիմելու վերջնաժամկետը 2015 թվականի հունվար ամիսն էր, մինչդեռ ԱԵԱ բողոքը ներկայացրել է 2016 թվականի Սեպտեմբերի 9-ին) մինչդեռ ԱԵԱ-ն պաշտոնապես ծանուցվել և ստացել է տեղեկատվական թերթիկը 2014 թվականի դեկտեմբերին («Բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման ուժի մեջ մտնելուց 7-օրյա ժամկետում):

66. Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ) հատվածի 3-րդ ենթահատվածում ՀՕՏԾ իրականացման արդյունքներով ստացվել է 1 գրավոր դիմում (1 ԱԵՏՏ, Մարալիկ, ծածկագիր՝ 08-003-0136-0055): Դիմում-բողոքը ներկայացվել է ՏԾԻԿ և քննարկվել սահմանված ժամկետներում: Բողոքը վերաբերվել է ազդեցության ենթակա հողակտորի վրա առկա մշակաբույսերի դիմաց փոխհատուցման բացակայությանը:

¹⁶ Համաձայն «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի (հոդված 5), «եթե օտարվում է սեփականության մի մասը, ապա սեփականատիրոջ պահանջով պետք է օտարվի այդ սեփականության չօտարված մասը ևս: Նման պահանջ սեփականատերը կարող է ներկայացնել բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:» Բոլոր ԱԵԱ-ներին տրամադրվել է խորհրդատվություն, նրանք պատշաճ ծանուցվել են, ստացել իրենց իրավունքները նկարագրող տեղեկատվական թերթիկը (պահանջների ներկայացման վեցնաժամկետը ևս ծանուցվել է ԱԵԱ-ներին): Միաժամանակ, ԱԵԱ-ն տեղեկացվել է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նա կարող է դիմել դատարան իր իրավունքների վերականգնման համար:

67. ՀՕՏԾ պատրաստման ընթացքում համայնքի կողմից կայացրած որոշման համաձայն հողակտորը հանդիսացել է համայնքային սեփականություն (առանց հողակտորի հետ առնչվող վարձակալի կամ չձևակերպված օգտագործողի), մինչդեռ կադաստրային տվյալների համաձայն հողակտորը մասնավոր սեփականություն էր: ՀՕՏԾ իրականացման ընթացքում 1 ԱԵՏՏ վերաձևակերպել է իր սեփականության իրավունքը ազդեցության ենթարկված հողակտորի նկատմամբ: Սեփականության իրավունքի ձևակերպումից հետո ԱԵՏՏ-ն չի համաձայնվել փոխհատուցման հաշվարկի հետ՝ նշելով, որ ազդեցության ենթարկված հողակտորի վրա առկա է եղել մշակաբույս, որը ՀՕՏԾ պատրաստման ընթացքում չի չափագրվել և չի ամրագրվել հողակտորի նկարագրության արձանագրությամբ՝ ստորագրված համայնքի ղեկավարի կողմից: Այս խնդիրը պարզաբանվել է հողակտորի նկարագրության և չափագրման արձանագրությունները կազմող կազմակերպության՝ «Գնահատողների միության» հետ: Բողոքը մերժվել է՝ հիմքում ունենալով գնահատման իրականացնող կազմակերպության հաստատումը, ըստ որի վերոնշյալ հողակտորի վրա որևէ մշակաբույս առկա չի եղել: Այնուամենայնիվ, սեփականատիրոջ անհամաձայնության պատճառով ՏԾԻԿ-ի կողմից նախաձեռնվել է հարկադիր օտարման գործընթաց: Մանրամասնությունները ներկայացված են Հավելված 1-ում (դեպք 1):
68. ԱՄԳ Համապատասխանության հետազոտության հարցման արդյունքների համաձայն ՀՕՏԾ պատրաստման և իրականացման գործընթացների վերաբերյալ բողոքներ կամ առարկություններ են ունեցել ԱԵՏՏ-ների 20 տոկոսը (8 ԱԵՏՏ), որոնց 75 տոկոսը (6 ԱԵՏՏ) բողոքը գրավոր չի ներկայացրել: Գրավոր կերպով բողոքներ չներկայացնելու և սահմանված կարգով բողոքարկման ֆորմալ ինստիտուտներից չօգտվելու հիմնական պատճառը բողոքման ընթացակարգին ծանոթ չլինելու մեջ է (67 տոկոս կամ 4 ԱԵՏՏ): Բողոքները կամ առարկությունները հիմնականում կապված են եղել հողակտորի չափագրման և մշակաբույսերի գնահատման գործընթացի հետ: Բողոքները կամ առարկությունները բանավոր ներկայացրել են ՏԻՄ կամ ԾԻԳ, որոնց կողմից ստացված պատասխանները ԱԵՏՏ-ներին չեն զոհացրել: Համապատասխանության հարցման արդյունքները ներկայացված են «Հանրային գոհունակությունը» բաժին VIII-ում:
69. Բոլոր 6 բանավոր բողոքները (որոնցից 3-ը ստացվել են Թալին-Լանջիկ (ԱԶԲ) հատվածում, 3-ը՝ Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ) հատվածում) պաշտոնապես գրանցվել են ՏԾԻԿ-ի կողմից և գերազանցապես վերաբերվել են կադաստրային քարտեզի ու սեփականության վկայականի միջև տվյալների անհամապատասխանությանը: Մանրամասնությունները ներկայացված են Հավելված 1-ում:

Հիմնական բացահայտումներ

Բողոքների լուծման մեխանիզմը և Բողոքների քննման խումբը ձևավորված են: Հանրային լուծման ընթացքում ԱԵԱ-ները տեղեկացվել են Բողոքների լուծման մեխանիզմի վերաբերյալ: Դրա վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է նաև Ծրագրի տեղեկատվական ձեռնարկում:

3-րդ ենթահատվածում ՀՕՏԾ իրականացման արդյունքներով է 1 գրավոր դիմում-բողոք ստացվել է Թալին-Լանջիկ, և ևս 1-ը՝ Լանջիկ-Գյումրի հատվածում: Երկու դեպքում էլ դիմում-բողոքներին տրվել են պարզաճ պատասխաններ:

Հաշվի առնելով գրասենյակային ուսումնասիրությունների և հարցազրույցների արդյունքները՝ ԱՄԳ-ն եզրահանգում է, որ ԲԼՄ ընթացակարգերը համապատասխան են, տրված որոշումները/լուծումները՝ պարզաճ:

դ) Փոխհատուցման տրամադրման գործընթաց

70. Փոխհատուցման վճարումը պետք է կատարվի Սեփականության օտարման պայմանագրի ստորագրումից հետո 14-օրյա ժամկետում: Գումարը պետք է փոխանցվի ԱԵԱ-ների բանկային հաշվին: Ընդ որում, ՀՕՏԾ դրույթների համաձայն, եթե ԱԵԱ-ն չունի բանկային հաշիվ, ապա Ծրագրի շրջանակներում նրա համար պետք է բացվի բանկային հաշիվ: Որպես լավագույն պայմաններ

(հարմար աշխարհագրական դիրք և գործարքային վճարների բացակայություն) առաջարկող առևտրային բանկ Տրանշ 3-ի համար ընտրվել է «Արարատբանկ» ԲԲԸ¹⁷: Միննույն ժամանակ ԱԵԱ-ները կարող են նաև գործել իրենց առկա բանկային հաշիվների միջոցով:

71. Փոխհատուցման փաստացի տրամադրումն իրականացվել է սահմանված ժամկետներում Ծրագրի կողմից բացված ԱԵԱ բանկային հաշիվներին ուղղակի փոխանցման միջոցով: Փոխհատուցման գործընթացի ներքո վերջին փոխանցումն իրականացվել է 2017 թվականի Փետրվարին: Հաշվի առնելով ԱՄԳ կողմից առաջարկված ճշգրտող միջոցառումների իրականացումը, վերջին փոխանցումն իրականացվել է 2017 թվականի ապրիլի 27-ին:
72. 15 հողակտորների դեպքում օտարման պայմանագրերը սահմանված ժամկետներում չեն ստորագրվել (պայմանագրի նախագծի ծանուցումից եռամսյա ժամկետ): Պատճառները մի քանիսն են. բացակայող ԱԵԱ-ներ, ժառանգության խնդիր, կադաստրային սխալներ և այլն: Ուստի, նշված դեպքերի համար «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան նախաձեռնվել են հարկադիր օտարման գործընթացի ընթացակարգերը (հարկադիր օտարման դեպքերը և ընթացակարգերը ներկայացված են «Հարկադիր օտարում և ձեռնարկված միջոցներ» բաժնում: Նման դեպքերում յուրաքանչյուր ԱԵԱ-ի համար ՀՕՏԾ-ով նախատեսված փոխհատուցման ենթակա գումարին համարժեք գումարի դատարանի դեպոզիտ հաշվին փոխանցումը համարվում է ՀՕՏԾ դրույթներին համապատասխան փոխհատուցման վճարման նախաձեռնում: Մինչդեռ հարկադիր օտարման ընթացքում գտնվող դեպքերի համար ՀՕՏԾ իրականացումը հաջողությամբ ավարտված կհամարվի օտարման մասին դատարանի որոշման ուժի մեջ մտնելուց հետո:
73. Արտաքին մոնիտորինգի ընթացքում պարզվել է, որ իրականացման փուլում Մաստարա համայնքի (ԱԶԲ հատված) և Մարալիկ համայնքի (ԵՆԲ հատված) փոխհատուցումը չի համապատասխանել ՀՕՏԾ դրույթներին, որի համար ՏԾԻԿ-ն իրականացրել է ճշգրտող միջոցառումներ (տե՛ս բաժին VI՝ «Տրամադրված փոխհատուցման գնահատումը», ենթաբաժին (ա)՝ «Փոխհատուցումը հողի կորստի դիմաց»): Բոլոր մյուս դեպքերում, փոխհատուցման տրամադրման գործընթացը համապատասխանել է ՀՕՏԾ դրույթներին:
74. ԱՄԳ Համապատասխանության հետազոտության հարցման արդյունքների համաձայն փոխհատուցման տրամադրման գործընթացից դժգոհություններ եղել են 3 ԱԵՏՏ-ների կամ հացված 40 ԱԵՏՏ-ների 7.5 տոկոսի մոտ (փոխհատուցված 35 ԱԵՏՏ-ների¹⁸ 8.6 տոկոս): Համապատասխանության հարցման արդյունքները ներկայացված են «Հանրային գոհունակությունը» բաժին VIII-ում:

Հիմնական բացահայտումներ

Տրանշ 3-ի ենթահատված 3-ում փոխհատուցված ԱԵԱ-ների փոխհատուցման տրամադրման գործընթացը համապատասխանում է ՀՕՏԾ-ներին: Օտարման ընթացքում գտնվող դեպոզիտ-փակվորված փոխհատուցման գումարներով 15 դեպքերի համար ՀՕՏԾ փոխհատուցման գործընթացը կհամարվի ամբողջությամբ ավարտված օտարման մասին դատարանի որոշման ուժի մեջ մտնելուց հետո:

¹⁷ «Արարատբանկ» ԲԲԸ-ն ընտրվել է որպես առևտրային բանկ, որը ԱԵԱ-ների փոխհատուցման վճարման համար առաջարկել է լավագույն պայմանները. (ա) մասնաճյուղերի առկայություն Արագածոտնի մարզի Աշտարակ և Թալին քաղաքներում, Շիրակի մարզի Գյումրի քաղաքում: (բ) գործարքային վճարների բացակայություն, փոխհատուցման գումարների և ԱԵԱ-ների հաշիվների սպասարկման նկատմամբ գործարքային վճարների բացակայություն: (գ) ԱԵԱ-ների համար մատչելի և ճկուն փոխհատուցման համակարգի մատուցում (ենթահաշիվների բացման հնարավորություն, այլ): (դ) ԱԵԱ-ների համար ծառայությունների հարմարությունը (աշխարհագրական դիրք և ցածր գործարքային վճարներ կամ դրանց բացակայություն): «Արարատբանկը» Տրանշ 2 ՀՕՏԾ (Աշտարակ-Թալին) իրականացման համար ընտրված բանկն է:

¹⁸ Հարցված 40 ԱԵՏՏ-ներից 5-ը դեռևս չեն փոխհատուցվել: Հսարցն ուղղվել է միայն փոխհատուցված ԱԵՏՏ-ներին:

ե) Հարկադիր օտարում և ձեռնարկված միջոցներ

75. Բոլոր այն դեպքերում, երբ ԱԵԱ-ների անհամաձայնությունների կամ այլ օբյեկտիվ հանգամանքների պատճառով սեփականության օտարման պայմանագրի նախագծի ծանուցումից հետո եռամսյա ժամկետում չի ստորագրվել, չօտարված հողերի համար «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի համաձայն ՏԾԻԿ-ը նախաձեռնել է դատական կարգով օտարման (Հարկադիր օտարման) գործընթացը: Մասնավորապես. (i) դատարանի դեպոզիտ հաշվին է հանձնվել օտարման դիմաց յուրաքանչյուր ԱԵԱ-ի համար ՀՕՏԾ դրույթներին համապատասխան հաշվարկված փոխհատուցման ենթակա գումարը, (ii) որից հետո՝ 7-օրյա ընթացքում պայմանագիրը չկնքվելու դեպքում, մեկամսյա ժամկետում ՏԾԻԿ-ը դատարան է ներկայացնում սեփականությունն օտարելու մասին հայցը: Դատարանի կողմից օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման չափի մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո սեփականությունը համարվում է օտարված՝ դատարանի կողմից սահմանված փոխհատուցման չափով: Դատական կարգով օտարման դեպքում օտարվող սեփականության նկատմամբ սեփականատիրոջ իրավունքը դադարում է:
76. ԱՄԳ տվյալներով սույն հաշվետվության պատրաստման դրությամբ 3-րդ ենթահատվածում Հարկադիր օտարման գործընթացում են գտնվել 15 հողակտորներ: Բոլոր հողակտորները մասնավոր են, որից՝ ԱԶԲ հատվածին բաժին է ընկել 9, իսկ ԵՆԲ հատվածին՝ 6 հողակտոր: Այս հողակտորների վրա առկա չէ որևէ բնակելի շինություն կամ ձեռնարկատիրական գործունեություն, հողակտորները գյուղատնտեսական նպատակով օգտագործվող վարելահողեր են: Նախաձեռնված հարկադիր օտարման դեպքերի դասակարգումն ըստ պատճառների ներկայացված է ստորև բերված աղյուսակ 6-ում: Տ3 ՀՕՏԾ 3-րդ ենթահատվածի Հարկադիր օտարման ընթացքում գտնվող դեպքերը ներկայացված են Հավելված 1-ում: Տ3 ՀՕՏԾ ավարտված հատվածների և հարկադիր օտարման ընթացքում գտնվող հատվածների սխեման ներկայացված է Հավելված 2-ում:

Աղյուսակ 6. Նախաձեռնված հարկադիր օտարման դեպքերն ըստ պատճառների (3-րդ ենթահատված)

N	Պատճառ	Դեպքեր, N			Դեպքեր, N		
		ԱԶԲ	ա/թ խոցելի (հող, N)	ա/թ խիստ ազդեցություն (հող, N)	ԵՆԲ	ա/թ խոցելի (հող, N)	ա/թ խիստ ազդեցություն (հող, N)
1	Կադաստրային անհամապատասխանություն	5	4	4	2	-	-
2	Ժառանգության խնդիր	3	1	1	1	1	-
3	Կադաստրային անհամապատասխանություն և ժառանգության խնդիր	1	-	-	1	1	1
4	Անհայտ ԱԵԱ-ներ և ժառանգության խնդիր	-	-	-	1	-	-
5	Անհամաձայնություն ազդեցության ենթակա հողակտորի վրա առկա մշակաբույսերի հետ	-	-	-	1	-	-
	Ընդամենը	9	5	5	6	2	1

Հիմնական բացահայտումներ

3-րդ ենթահատվածում Հարկադիր օտարման գործընթացում են գտնվում 15 հողակտորներ, որոնցից 9-ը ԱԶԲ հատվածում և 6-ը ԵՆԲ հատվածում: Այս հողակտորների վրա առկա չէ որևէ բնակելի շինություն կամ ձեռնարկատիրական գործունեություն, հողակտորները գյուղատնտեսական նպատակով օգտագործվող վարելահողեր են: Հարկադիր օտարումն իրականացվում է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն: Հարկադիր օտարման գործընթացի նախաձեռնումը համապատասխանում է ՀՕՏԾ դրույթներին:

զ) Օրինականացում և հատուկ դեպքեր

77. ՀՕՏԾ-ով սահմանված «Օրինականացման պայմանների» համաձայն, բոլոր այն անձինք, ովքեր ազդեցության ենթակա հողամասի և դրան ամրացված այլ գույքի նկատմամբ չունեն սեփականությունը կամ այլ գույքային իրավունքներ հավաստող պետական փաստաթղթեր, սակայն ունեն որոշակի օրինական ակնկալիքներ (դրանք ծագում են օրենքի կամ գույքի փաստացի տիրապետման և օգտագործման ուժով, կամ գույքային իրավունքների ձեռքբերման հնարավորությունները ուղղակի բխում են կամ սահմանված են ՀՀ իրավական ակտերով), պետք է ստանան իրավական կարգավիճակ:
78. Հաշվի առնելով Տրանշ 2-ի փորձը, Տրանշ 3-ի ՀՕՏԾ-ներն առանձնացրել են օրինականացման ընթացքում առաջացող տիպային դեպքերը և ներկայացրել դրանց լուծման կոնկրետ ընթացակարգեր: Մասնավորապես դրանք վերաբերում են՝ բացակա ԱԵԱ-ների, անձնագրերի, ժառանգության ճանաչման, իրավունքի պետական գրանցման վկայականների, ինչպես նաև արգելանքով ծանրաբեռնված գույքերի, ոչ-բնակելի ինքնակամ շինությունների կամ անհայտ (չնույնականացված) սեփականատերերի հետ կապված խնդիրներին, լիազորագրերի թարգմանության հաստատում, ինչպես նաև նոտարական գրասենյակից դուրս նոտարի այցելություն երբ ԱԵԱ-ն ֆիզիկապես անգոր է նոտարական գրասենյակ այցելել:
79. 3-րդ ենթահատվածի Թալին-Լանջիկ հատվածի 15 հողամասերի ԱԵՏՏ-ների համար իրականացվել են օրինականացման հետևյալ գործողությունները. (i) 10 հողի համար նոտարի կողմից վավերականացվել է լիազորագրերի թարգմանության իսկությունը, (ii) 3 հողի համար իրականացվել է սեփականատերերի ժառանգության ճանաչման գործընթացը, (iii) 2 հողի համար կազմակերպվել է նոտարական գրասենյակից դուրս նոտարի այցելություն՝ պայմանագիրը կնքելու համար (երբ հողի սեփականատերը ֆիզիկապես չի կարողացել նոտարական գրասենյակ այցելել):
80. 3-րդ ենթահատվածի Լանջիկ-Գյումրի հատվածի 19 հողամասերի ԱԵՏՏ-ների համար իրականացվել են օրինականացման հետևյալ գործողությունները. (i) 10 հողի համար նոտարի կողմից վավերականացվել է լիազորագրերի թարգմանության իսկությունը, (ii) 3 հողի համար իրականացվել է սեփականատերերի ժառանգության ճանաչման գործընթացը, (iii) 6 հողի համար կազմակերպվել է նոտարական գրասենյակից դուրս նոտարի այցելություն՝ պայմանագիրը կնքելու համար (երբ հողի սեփականատերը ֆիզիկապես չի կարողացել նոտարական գրասենյակ այցելել):

Հիմնական բացահայտումներ

3-րդ ենթահատվածում 34 հողերի (15 հողակտոր ԱԶԲ հատվածում և 19 հողակտոր ԵՆԲ հատվածում) համար իրականացվել են օրինականացման գործողություններ, որոնք համապատասխանում են ՀՕՏԾ և ՀՕՏԾ դրույթներին¹⁹:

¹⁹ 34 հողակտորներից 33-ը օտարվել են և փոխհատուցումը վճարվել է ԱԵԱ-ներին: Մնացած 1 մասնավոր հողակտորը (1 ԱԵՏՏ) ենթակա է հարկադիր օտարման Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ) հատվածում (Մարալիկ, ծածկագիր 08-003-0136-0055): Հարկադիր օտարման գործընթացում գտնվելու պատճառը ազդեցության ենթակա հողակտորի վրա առկա մշակաբույսերի դիմաց փոխհատուցման բացակայությանն է: ԱԵԱ-ն ներկայացրել է գրավոր բողոք, որը մերժվել է (այս դեպքի մանրամասնությունների համար տես գ) ենթակետ՝ «Բողոքներ և բողոքարկման մեխանիզմ»):

V. Ազդեցության փաստացի շրջանակը²⁰

ա) Հողի մշտական կորուստ և հողօգտագործողների վրա ազդեցություն

81. Համաձայն հաստատված ՀՕՏԾ-ների, 3-րդ ենթահատվածում Ծրագրի ազդեցության շրջանակը ԱԶԲ և ԵԼԲ հատվածներում ընդգրկել է 140 հողակտոր (այդ թվում՝ 2 պետական, 60 համայնքային և 78 մասնավոր)՝ 257,218 մ² օտարման ենթակա ընդհանուր մակերեսով: Դա կազմում է Տրանշ 3-ի ընդհանուր ազդեցության մակերեսի շուրջ 22 տոկոսը (կամ հողակտորների 15 տոկոսը):

Աղյուսակ 7. Ենթահատված 3-ում հողերի և հողօգտագործողների վրա ազդեցության պատկերը

Ցուցանիշ. Հողի մշտական կորուստ	Հողակտոր, N	Մակերես, մ ²	ԱԵՏՏ, N	Վարձակալ ԱԵՏՏ, N	Չձևակերպված օգտագործող ԱԵՏՏ, N
1	2	3	4	4.1	4.2
Ընդամենը 3րդ ենթահատված					
a. ՀՕՏԾ-ով պլանավորված	140	257,218	121 (a)	1	18
Պետական հող	2	4,450	0	0	0
Համայնքային հող	60	157,238	3	1	2
Մասնավոր հող	78	95,529	118	0	16
b. Իրականացման արդյունքներ	140	263,268	120 (a)	0	16
Պետական հող	3	4,496	0	0	0
Համայնքային հող	57	156,268	2	0	2
Մասնավոր հող	80	102,505	118	0	14
Տարբերություն (b-a)	0	6,050	-1	-1	-2
Պետական հող	1	45	0	0	0
Համայնքային հող	-3	-970	-1	-1	0
Մասնավոր հող	2	6,975	0	0	-2
Թալին-Լանջիկ (ԱԶԲ)					
a. ՀՕՏԾ-ով պլանավորված	60	73,045	62	0	13
Մաստարա	60	73,045	62	0	13
b. Իրականացման արդյունքներ	60	73,045	61	0	12
Մաստարա	60	73,045	61	0	12
Տարբերություն (b-a)	0	0	-1	0	-1
Մաստարա	0	0	-1	0	-1
Lanjik-Gyumri (EIB)					
a. ՀՕՏԾ-ով պլանավորված	80	184,173	59	1	5
Հայրենյաց	35	138,608	24	0	2
Մարալիկ	45	45,565	35	1	3
b. Իրականացման արդյունքներ	80	190,223	59	0	4
Հայրենյաց	35	144,664	24	0	2
Մարալիկ	45	45,559	35	0	2
Տարբերություն (b-a)	0	6,050	0	-1	-1
Հայրենյաց	0	6,056	0	0	0
Մարալիկ	0	-5	0	-1	-1

Նշում՝ (a) ԱԶԲ հատվածի 1 չձևակերպված օգտագործող նաև հանդիսանում է ազդեցության ենթարկված տարածքի 1 մասնավոր հողակտորի սեփականատեր

Աղբյուրը՝ ՏՁՀԿ, Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

82. Իրականացման փուլում տեղի են ունեցել ցուցանիշների փոփոխություններ:

Թալին-Լանջիկ (ԱԶԲ) հատվածում. (1) կադաստրային քարտեզների ճշգրտման արդյունքում փոփոխվել է համայնքային 1 հողակտորի սեփականության ձևը, այն այժմ հանդիսանում է պետական սեփականություն (Մաստարա), (2) հետևյալ փոփոխությունների արդյունքում ԱԵՏՏ-ների թիվը 1-ով նվազել է. (i) Իրականացման ընթացքում 1 չձևակերպված օգտագործող ԱԵՏՏ գրանցել է սեփականության իր իրավունքն ազդեցության ենթարկված հողակտորի նկատմամբ: Քանի որ նշված հողակտորի նախկին սեփականատերն անհայտ է (1 ԱԵՏՏ, Մաստարա, 02-069-0103-0031, մասնավոր հողակտոր), ԱԵՏՏ-ների թիվը նվազել է 1-ով:

Լանջիկ-Գյումրի հատվածում. (1) նախագծային լուծման արդյունքում փոփոխվել են մասնավոր 8 և համայնքային 2 հողակտորների օտարվող մակերեսները (Հայրենյաց համայնքում ավելացել է

²⁰ Այս բաժինը նվիրված է ազդեցության իրական ծավալների և փոխհատուցման ենթակա դեպքերի որոշմանը: Փոխհատուցման փաստացի վճարման հանգամանքը և դրա համապատասխանությունը քննարկվում է հաջորդ բաժնում:

6,055.8 մ²-ով, իսկ Մարալիկ համայնքում կրճատվել է 5.4 մ²-ով), ինչը թույլ է տվել օտարել այդ հողակտորների՝ տնտեսական և գործառնական նշանակությունը կորցրած հատվածները, (2) կադաստրային քարտեզների ճշգրտման արդյունքում փոփոխվել է համայնքային 2 հողակտորների սեփականության ձևը, նրանք այժմ հանդիսանում են մասնավոր սեփականություն (Մարալիկ), (3) ԱԵՏՏ-ների ընդհանուր թիվը մնացել է անփոփոխ. (i) Իրականացման ընթացքում 1 չձևակերպված օգտագործող գրանցել է սեփականության իր իրավունքն ազդեցության ենթարկված հողակտորի նկատմամբ: Քանի որ նշված հողակտորի նախկին սեփականատերը (1 ԱԵՏՏ, Մարալիկ, 08-003-128-0004, մասնավոր հողակտոր) մահացել է, ԱԵՏՏ-ների թիվը նվազել է 1-ով: (ii) Իրականացման ընթացքում 1 նոր ԱԵՏՏ (որը ՀՕՏԾ-ում չէր հիշատակվում) գրանցել է սեփականության իր իրավունքն ազդեցության ենթարկված հողակտորի նկատմամբ, որը ՀՕՏԾ-ով համարվել է համայնքային սեփականություն:

Արդյունքում ԱԵՏՏ-ների ընդհանուր թիվը նվազել է 1 ԱԵՏՏ-ով:

83. Իրականացման արդյունքներով Ծրագրի ազդեցության շրջանակն ընդգրկել է 263,268 մ² օտարման ենթակա ընդհանուր մակերեսով 140 հողակտոր (այդ թվում՝ 3 պետական, 57 համայնքային և 80 մասնավոր) (տե՛ս աղյուսակ 7): Արդյունքում Ծրագիրն ազդել է ընդհանուր առմամբ 120 ԱԵՏՏ-ների վրա, որոնք ենթակա են փոխհատուցման ՀՕՏԾ դրույթներին համապատասխան:
84. Համաձայն ՀՕՏԾ-ի 120 ԱԵՏՏ-ներից 1-ը հանդիսացել է համայնքային հողի վարձակալ (ԵՆԲ, Մարալիկ, 08-003-0126-0029): Իրականացման ընթացքում այս ԱԵՏՏ-ն գրանցել է սեփականության իր իրավունքը նշված հողակտորի նկատմամբ: Հետևաբար, ՀՕՏԾ իրականացման արդյունքներով 3-րդ ենթահատվածում վարձակալներ չկան: Սեփականության իրավունքի գրանցման արդյունքում 3-րդ ենթահատվածի սեփականատերերի թիվն աճել է 1-ով (մինչդեռ վարձակալների թիվը նվազել է 1-ով), իսկ ԱԵՏՏ-ների ընդհանուր թիվը մնացել է անփոփոխ:
85. Հաստատված ՀՕՏԾ-ով 120 ԱԵՏՏ-ներից 18-ը 3 համայնքային և 22 մասնավոր հողակտորների չձևակերպված օգտագործողներ: Չձևակերպված օգտագործողների թիվը 2-ով նվազել է՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելու արդյունքում (1 ԱԵՏՏ ԱԶԲ հատվածից, 1 ԱԵՏՏ-ներ ԵՆԲ հատվածից), և կազմել է 16 ԱԵՏՏ (3 համայնքային և 22 մասնավոր հողակտորների) ցված 5 ԱԵՏՏ-ներից 1-ն արդեն իսկ հանդիսացել է օտարման գոտու այլ հողակտորի սեփականատեր:
86. Իրականացման արդյունքների համաձայն.
Թալին-Լանջիկ (ԱԶԲ) հատվածում հողի սեփականատերերի թիվը մնացել է անփոփոխ. 1 չձևակերպված օգտագործող ԱԵՏՏ գրանցել է սեփականության իր իրավունքն ազդեցության ենթարկված հողակտորի նկատմամբ: Քանի որ նշված հողակտորի նախկին սեփականատերը անհայտ է (1 ԱԵՏՏ, Մաստարա, 02-069-0103-0031, մասնավոր հողակտոր), սեփականատեր ԱԵՏՏ-ների թիվը մնացել է անփոփոխ:
Լանջիկ-Գյումրի հատվածում հողի սեփականատերերի թիվն ավելացել է 2 ԱԵՏՏ-ով. (1) 1 չձևակերպված օգտագործող ԱԵՏՏ գրանցել է սեփականության իր իրավունքն ազդեցության ենթարկված հողակտորի նկատմամբ: Քանի որ նշված հողակտորի նախկին սեփականատերը մահացել է (1 ԱԵՏՏ, Մարալիկ, 08-003-128-0004, մասնավոր հողակտոր), սեփականատեր ԱԵՏՏ-ների թիվը չի փոխվել: (2) 1 վարձակալ գրանցել է սեփականության իր իրավունքն ազդեցության ենթարկված հողակտորի նկատմամբ, որի հետևանքով սեփականատերերի թիվն ավելացել է 1 ԱԵՏՏ-ով: (3) 1 նոր ԱԵՏՏ գրանցել է սեփականության իր իրավունքն ազդեցության ենթարկված հողակտորի նկատմամբ, որը ՀՕՏԾ-ով համարվել է համայնքային սեփականություն: Արդյունքում սեփականատերի թիվն ավելացել է 1 ԱԵՏՏ-ով:
87. Հողի մշտական կորստի ենթակա 80 մասնավոր հողակտորների սեփականատերերի քանակը կազմում է 105 ԱԵՏՏ²¹, որոնցից 50 ԱԵՏՏ-ն Թալին-Լանջիկ, իսկ 55-ը՝ Լանջիկ-Գյումրի հատվածում:

²¹ Հողակտորների թվի նկատմամբ փոխհատուցման ենթակա ԱԵՏՏ-ների թվի գերազանցումը բացատրվում է նրանով, որ որոշ ԱԵՏՏ-ներ հանդիսացել են ակտիվների համատեղ սեփականատերեր:

Աղյուսակ 8. Ենթահատված 3-ում ազդեցությունը մասնավոր հողերի և սեփականատերերի վրա

Ցուցանիշը. Հողի մշտական կորուստ	Մասնավոր հողեր, N	Մակերես, մ ²	Սեփականատերեր, ԱԵՏՏ
Ընդամենը 3-րդ ենթահատված			
a. ՀՕՏԾ-ով պլանավորված	78	95,529	103
b. Իրականացման արդյունքներ Տարբերություն (b-a)	80 2	102,505 6,975	105 2
Թալին-Լանջիկ (ԱԶԲ)			
a. ՀՕՏԾ-ով պլանավորված	41	53,753	50
b. Իրականացման արդյունքներ Տարբերություն (b-a)	41 0	53,753 0	50 0
Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)			
a. ՀՕՏԾ-ով պլանավորված	37	41,776	53
b. Իրականացման արդյունքներ Տարբերություն (b-a)	39 2	48,751 6,975	55 2

Աղբյուրը՝ ՏՀՀԿ, Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

88. Նախագծային լուծման և կադաստրային քարտեզների ճշգրտման արդյունքում ԵՆԲ հատվածում Ծրագրի կարիքների համար անհրաժեշտ հողատարածքի ընդհանուր մակերեսը աճել է 6,975մ2-ով, իսկ ազդեցության ենթարկված հողակտորների, ինչպես նաև ԱԵՏՏ-ների ընդհանուր թվաքանակները ՀՕՏԾ պլանային ցուցանիշների համեմատությամբ աճել են 2-ով (տես 82, 86, 87 կետեր):

բ) Ազդեցությունը մշակաբույսերի և ծառերի վրա

89. ՀՕՏԾ համաձայն մշակաբույսերի կորստի դիմաց փոխհատուցման ենթակա են 115 ԱԵՏՏ-ներ, որոնց ընդհանուր առմամբ պետք է փոխհատուցվի 3 համայնքային (1,503 մ²) և 74 մասնավոր (93,543 մ²) հողակտորներից մշակաբույսերի կորուստը: 115 ԱԵՏՏ-ներից 98-ը հողի սեփականատեր են, 2-ը՝ համայնքային հողերի չձևակորպված օգտագործող և 15-ը՝ մասնավոր հողի չձևակորպված օգտագործող:

Աղյուսակ 9. Ենթահատված 3-ում ազդեցությունը մշակաբույսերի վրա

Ցուցանիշը. Ազդեցության ենթակա մշակաբույսեր	Հողակտոր, N	Մակերես, մ ²	ԱԵՏՏ, N	Չձևակերպված օգտագործող ԱԵՏՏ
1	2	3	4	4.1
Ընդամենը 3-րդ ենթահատված				
a. ՀՕՏԾ-ով պլանավորված	77	95,047	115	17
Համայնքային հող	3	1,503	2	2
Մասնավոր հող	74	93,543	113	15
b. Իրականացման արդյունքներ	77	101103	113	15
Համայնքային հող	3	1,503	2	2
Մասնավոր հող	74	99,599	111	13
Տարբերություն (b-a)	0	6056	-2	-2
Համայնքային հող	0	0	0	0
Մասնավոր հող	0	6,056	-2	-2
Թալին-Լանջիկ (ԱԶԲ)				
a. ՀՕՏԾ-ով պլանավորված	43	53,762	61	13
b. Իրականացման արդյունքներ Տարբերություն (b-a)	43 0	53,762 0	60 -1	12 -1
Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)				
a. ՀՕՏԾ-ով պլանավորված	34	41,284	54	4
b. Իրականացման արդյունքներ Տարբերություն (b-a)	34 0	47,340 6,056	53 -1	3 -1

Աղբյուրը՝ ՏՀՀԿ, Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

90. Իրականացման ընթացքում տեղի են ունեցել ցուցանիշների փոփոխություններ (տե՛ս նախորդ բաժինը). (i) 2 հողեր վերաձևակերպվել են մասնավոր սեփականության, որոնց չձևակերպված օգտագործողները օրինականացվել են և դարձել այդ հողերի սեփականատեր: Այնուամենայնիվ, 3-րդ ենթահատվածի սեփականատեր ԱԵՏՏ-ների ընդհանուր թիվը մնացել է անփոփոխ, քանի որ նշված հողակտորների նախկին սեփականատերերը կամ մահացել են (1 ԱԵՏՏ, ԵՆԲ, Մարալիկ, 08-003-128-0004, մասնավոր հողակտոր) կամ անհայտ են (1 ԱԵՏՏ, ԱԶԲ, Մաստարա, 02-069-0103-0031, մասնավոր հողակտոր): Արդյունքում մշակաբույսերի կորստի դիմաց փոխհատուցման ենթակա ԱԵՏՏ-ների ընդհանուր թիվը 2-ով կրճատվել է: (ii) ԵՆԲ հատվածում նախագծային լուծման արդյունքում մշակաբույսերի կորստի համար փոխհատուցման ենթակա 7 մասնավոր հողակտորների մակերեսն ավելացել է 6,056 մ²-ով:
91. Իրականացման արդյունքներով 3-րդ ենթահատվածում մշակաբույսերի համար փոխհատուցման ենթակա ԱԵՏՏ-ների թիվը նվազել է 2-ով և կազմել 113 ԱԵՏՏ (98 հողի սեփականատեր, 2 համայնքային հողի չձևակորպված օգտագործող և 13 մասնավոր հողի չձևակորպված օգտագործող):
92. ՀՕՏԾ իրականացման արդյունքներով 5 սեփականատեր ԱԵՏՏ-ներ (3 հողակտոր) ենթակա են փոխհատուցման 3 փայտանյութ տվող ծառերի և 6 դեկորատիվ ծառերի կորստի համար (ԵՆԲ հատված): Նշված բոլոր ԱԵՏՏ-ները ենթակա են փոխհատուցման ծառերի կորստի համար:

գ) Ազդեցությունը շենքերի/շինությունների և շարժական բարելավումների վրա

93. ՀՕՏԾ համաձայն 3-րդ ենթահատվածում առկա են 2 օրինական և 3 ինքնական ոչ բնակելի շինություններ: Ինքնական շինությունները, օրինականացման դեպքում, ենթակա են փոխհատուցման:
94. Իրականացման ընթացքում պարզ դարձավ, որ տեխնիկական սխալի պատճառով 1 հուշաքար գրանցվել է որպես ապօրինի ոչ բնակելի շինություն (Մարալիկ, 08-003-0640-0001, համայնքային հողակտոր, ԵՆԲ հատված). Հուշաքարը շարժական գույք է և Մարալիկ համայնքը արդեն իսկ վերաբնակեցման օժանդակության իրավունք ունի այս հուշաքարի համար (տես կետ 99)²²: Արդյունքում ապօրինի ոչ բնակելի շինությունների ընդհանուր թիվը կրճատվել է 1-ով և կազմել 2:
95. Իրականացման ընթացքում 2 ապօրինի շինություններից ոչ մեկը չի օրինականացվել: 2 ապօրինի շինությունները գտնվում էին համայնքային հողակտորների վրա (Մաստարա, 02-069-0346-0002, ԱԶԲ հատված և Մարալիկ, 08-003-0638-0001, ԵՆԲ հատված):
96. 2 ԱԵՏՏ-ներ 2 օրինական շինությունների (1 խանութ և 1 տեխսպասարկման կենտրոն) համար ենթակա են փոխհատուցման (ԵՆԲ հատված):
97. Հաստատված ՀՕՏԾ-ով 4 մասնավոր հողակտորներ (Մարալիկ, ԵՆԲ) և 2 համայնքային հողակտորներ (1-ը Մարալիկում, ԵՆԲ և 1-ը Մաստարայում, ԱԶԲ) վերաբնակեցման օժանդակության իրավունք ունեն շարժական բարելավումների համար, մասնավորապես՝ մասնավոր հողակտորների 2 շարժական մետաղյա տնակների, սարքավորումների և կենցաղային տեխնիկայի համար և 2 համայնքային հողակտորների 2 հուշաքարերի համար: Այս 4 շարժական բարելավումները պետք է տեղափոխվեն առանց վնասվելու: Իրականացման ընթացքում այս թիվը մնացել է անփոփոխ:

դ) Ազդեցությունը բիզնեսի և զբաղվածության վրա

98. Ենթահատված 3-ի օտարման գոտում չկան բիզնեսի վրա ազդեցության և զբաղվածության կորստի դեպքեր:

²² Ըստ Իրավասությունների մատրիցի, հողակտորի վրա կամ շինության ներսում առկա շարժական գույքի սեփականատերերը իրավունք ունեն ստանալ վերաբնակեցման օժանդակություն՝ շարժական գույքի առանց վնասվելու տեղափոխության տրանսպորտային ծախսերը փոխհատուցելու համար:

ե) Վերաբնակեցում

99. Ենթահատված 3-ում ֆիզիկական վերաբնակեցման դեպքեր չկան:

զ) Ազդեցությունը սոցիալապես խոցելիների վրա և «խիստ» ազդեցություն

100. Հաստատված ՀՕՏԾ-ով ենթահատված 3-ում սոցիալապես խոցելի լինելու կարգավիճակ են ստացել 25 ԱԵՏՏ-ներ: Դրանցից 12-ը եղել են աղքատ ԱԵՏՏ-ներ, 13-ը՝ գլխավորել է կին, 7-ը՝ տարեց և 2-ը՝ հաշմանդամ ԱԵԱ:

101. ՀՕՏԾ իրականացման արդյունքներով աղքատ ԱԵՏՏ-ների թիվն ավելացել է 1-ով (1 ԱԵՏՏ համարել է անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք ՀՕՏԾ պլանավորման փուլում թերի են եղել; ԱԶԲ հատված: Արդյունքում, 3-րդ ենթահատվածի փոխհատուցման ենթակա խոցելի ԱԵՏՏ-ների ընդհանուր թվաքանակը կազմել է 26 ԱԵՏՏ (տե՛ս աղյուսակ 10):

Աղյուսակ 10. Ենթահատված 3-ում ազդեցությունը խոցելիների վրա և խիստ ազդեցություն

	Ընդամենը խոցելի ԱԵՏՏ, N	խիստ ԱԵՏՏ, N
a. ՀՕՏԾ-ով պլանավորված	25	74
Թալին-Լանջիկ (ԱԶԲ)	12	40
Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)	13	34
b. Իրականացման արդյունքներ	26	74
Թալին-Լանջիկ (ԱԶԲ)	13	40
Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)	13	34

Աղբյուրը՝ ՏՀՀԿ, Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

102. Ծրագրի խիստ ազդեցությանը ենթարկված ՏՏ-ների պլանային թվաքանակը 74 է եղել (12 չձևակերպված օգտագործող և 62 հողի սեփականատեր), որոնք բոլորը ենթակա են փոխհատուցման: Իրականացման արդյունքներով խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ների թվաքանակը չի փոփոխվել և Թալին-Լանջիկ (ԱԶԲ) հատվածում, և՛ Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ) հատվածում: Չնչին փոփոխվել է խիստ ազդեցության ենթակա ԱԵՏՏ-ների կառուցվածքը, քանի որ 1 չձևակերպված օգտագործողը օրինականացվել է և փոխհատուցվել որպես հողի սեփականատեր: Արդյունքում, խիստ ազդեցության ենթարկվածների կառուցվածքը հետևյալն է՝ 11 չձևակերպված օգտագործող և 63 հողի սեփականատեր:

Աղյուսակ 11. Ենթահատված 3-ում ազդեցության ենթարկվածները

Համայնք	Ընդամենը ԱԵՏՏ	Սեփականատեր	Խոցելի	Չձևակերպված օգտագործող	խիստ ԱԵՏՏ	Ընդամենը խոցելի ԱԵՏՏ	Աղքատ	Կնոջ գլխավորած	Տարեցի գլխավորած	Հաշմանդամի գլխավորած
Թալին-Լանջիկ (ԱԶԲ)	62	50	0	12	40	13	8	7	1	1
Մաստարա	62	50	0	12	40	13	8	7	1	1
Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)	59	55	0	4	34	13	5	6	6	1
Հայրենյաց	24	22	0	2	10	4	2	2	1	0
Մարալիկ	35	33	0	2	24	9	3	4	5	1
Ընդամենը	120	105	0	16	74	26	13	13	7	2

Աղբյուրը՝ ՏՀՀԿ, Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

103. Այսպիսով, ըստ արտաքին մոնիտորինգի, Ծրագրի ազդեցության ենթարկվածների ընդհանուր թիվը 3-րդ ենթահատվածում կազմել է 120 ՏՏ, որոնցից 105-ը հողի սեփականատերեր են, և 16-ը՝ հողի չձևակերպված օգտագործողներ (14-ը՝ մասնավոր, 2-ը՝ համայնքային հողի): Ծրագրի «խիստ» ազդեցության են ենթարկվել ընդամենը 74 ԱԵՏՏ-ներ: 120 ԱԵՏՏ-ներից 26-ը «խոցելի» են, այդ թվում

25 հողի սեփականատեր և 1 չձևակերպված օգտագործող: «խոցելի» ԱԵՏՏ-ներից 20-ը ենթարկվել են նաև Ծրագրի խիստ ազդեցության:

Հիմնական բացահայտումներ

Ենթահարված 3-ը ազդել է 3 համայնքների 3 պեղական, 57 համայնքային և 80 մասնավոր հողակտորների վրա: Ազդեցության ենթակա փնային փնտեսությունները 120-ն են, որոնցից 26-ը խոցելի են: Առկա են նաև 16 չձևակերպված օգտագործողներ: Ծրագրի խիստ ազդեցության է ենթարկվել 74 ԱԵՏՏ, որից 20-ը խոցելի են:

Առկա են մշակաբույսերի, ծառերի կորստի և շինությունների վրա ազդեցության դեպքեր:

Բիզնեսի, զբաղվածության կորստի, ինչպես նաև ֆիզիկական վերաբնակեցման դեպքեր չկան:

Ծրագրի ազդեցության փաստացի պատկերը 3-րդ ենթահարվածում շեղվում է ՀՕՏԾ պլանային և իրականացման ցուցանիշներից՝ նախագծային լուծումների, կադաստրային քարտեզների ճշգրտման և օրինականացման գործընթացների հեղինակությունով: Փոխհատուցման ծրագիրը պետք է համապատասխանի ԱՄԳ բացահայտած փաստացի ազդեցության պատկերին:

VI. Տրամադրված փոխհատուցման գնահատումը

ա) Փոխհատուցումը հողի կորստի դիմաց

104. Հողի մշտական կորստի դիմաց տրամադրվում է «համարժեք փոխհատուցում», որի հիմքում փոխարինման արժեքի որոշումն է: Վերջինը հաշվարկվում է հողի շուկայական կամ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է) գումարելով 15 տոկոս (տե՛ս աղյուսակ 4)²³: Ենթահատված 3-ում գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության բոլոր հողերի փոխհատուցումը հաշվարկվել է փոխարինման արժեքով՝ շուկայական կամ կադաստրային արժեքի հիման վրա²⁴: Փոխհատուցման միավոր դրույքաչափերը գնահատվել են որակավորված անկախ գնահատողի կողմից:

105. 80 մասնավոր հողակտորների մշտական կորստի դիմաց փոխհատուցման ենթակա են 105 ԱԵՏՏ-ներ: Փոխհատուցումը հաջողությամբ ավարտվել է 65 հողակտորների դիմաց 87 ԱԵՏՏ-ների դեպքում՝ ընդամենը փոխհատուցվել է 24, 389, 130 դրամ: Փոխհատուցման հաշվարկը համապատասխանում է ՀՕՏԾ դրույթներին²⁵: 65 փոխհատուցված հողակտորներից 42-ը փոխհատուցվել են պայմանագրի ստորագրման գործընթացի շրջանակներում, մինչդեռ 23 հողակտորներ (34 սեփականատեր ԱԵՏՏ) ներգրավված են եղել դատական գործընթացներում և փոխհատուցվել են հարկադիր օտարման գործընթացի շրջանակներում: Մնացած 15 մասնավոր հողակտորների (18,360 մ2) օտարման և փոխհատուցման գործընթացն իրականացվում է հարկադիր օտարման գործընթացի հիման վրա: 18 ԱԵՏՏ-ների փոխհատուցման համար դատարանի դեպոզիտային հաշվին է փոխանցվել ընդամենը 2,733,402 դրամ: Հողակտորների օրինական սեփականատերերը հնարավորություն ունեն (կամ կունենան) ստանալ իրենց սեփականության օտարման դիմաց ՀՕՏԾ դրույթներին համապատասխան փոխհատուցում հիմք ընդունելով դատարանի որոշումը: Հետևաբար, 15 մասնավոր հողակտորների 18 ԱԵՏՏ-ների մասով ՀՀ օրենսդրության և ՀՕՏԾ դրույթներին համապատասխան նախաձեռնվել է փոխհատուցման գործընթաց²⁶:

Աղյուսակ 12. Ենթահատված 3-ում փոխհատուցումը մասնավոր հողի մշտական կորստի դիմաց

Ցուցանիշը. Հողի մշտական կորուստ	Մասնավոր հողեր, N	Մակերես մ ²	Սեփականատեր ԱԵՏՏ, N	Փոխհատուցում, դրամ
Ընդամենը 3-րդ ենթահատված				
Ընդամենը	80	102,505	105	27,122,532
Փաստացի փոխհատուցված	65	84,144	87	24,389,130
Պայմանագրի անմիջական կնքմամբ	42	55,840	53	19,856,043
Փոխհատուցվել է հարկադիր օտարմամբ	23	28,305	34	4,533,087
Հարկադիր օտարման ընթացքում	15	18,360	18	2,733,402
Թախին-Լանջիկ (ԱԶԲ)				
Ընդամենը	41	53,753	50	9,438,562
Փաստացի փոխհատուցված	32	43,904	40	7,739,424
Պայմանագրի անմիջական կնքմամբ	21	29,853	24	5,281,973
Փոխհատուցվել է հարկադիր օտարմամբ	11	14,051	16	2,457,451
Հարկադիր օտարման ընթացքում	9	9,850	10	1,699,137
Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)				
Ընդամենը	39	48,751	55	17,683,970
Փաստացի փոխհատուցված	33	40,241	47	16,649,706
Պայմանագրի անմիջական կնքմամբ	21	25,987	29	14,574,070
Փոխհատուցվել է հարկադիր օտարմամբ	12	14,254	18	2,075,635
Հարկադիր օտարման ընթացքում	6	8,511	8	1,034,265

Աղբյուրը՝ ՏՀՀԿ, Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

²³ 15 տոկոս հավելումը սահմանավում է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով և համապատասխանաբար ներառվել է նաև Ծրագրի ՀՕՏԾ-ում:

²⁴ Թախին-Լանջիկ (ԱԶԲ) հատվածում բոլոր հողերը փոխհատուցվել են շուկայական արժեքով, մինչդեռ Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ) հատվածում 37 հողակտոր (35 մասնավոր և 2 համայնքային) կամ ԵՆԲ հատվածում բոլոր հողերի 38 տոկոսը փոխհատուցվել են կադաստրային արժեքով (քանի որ նշված հողերի կադաստրային արժեքը բարձր է եղել շուկայական արժեքից):

²⁵ ԱՄԳ-ն ստուգել է հաշվարկների ճշգրիտ լինելը, այլ ոչ թե փոխհատուցման գնահատումը, որը լիցենզավորված գործունեություն է:

²⁶ Եթե Համապատասխանության հաշվետվության վերանայման և ԱԶԲ/ԵՆԲ կողմից հաստատումից հետո հարկադիր օտարման գործընթացում դեռևս դեպքեր գտնվեն, ապա ՏԾԻԿ-ը չի կարող թույլատրել շինարարական աշխատանքների սկիզբը համապատասխան հատվածներում մինչև դատարանի որոշման ուժի մեջ մտնելը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կադաստրում սեփականության իրավունքի գրանցումը:

106. ջն համայնքային հողակտորների մշտական կորստի դիմաց փոխհատուցման ենթակա են 3 համայնքներ: Համայնքային բոլոր հողակտորների օտարումն ավարտվել է, որոնցից 53-ի փոխհատուցման հաշվարկը համապատասխանել է ՀՕՏԾ դրույթներին: Մաստարա համայնքի (ԱՁԲ) 3 և Մարալիկ համայնքի (ԵՆԲ) 1 հողակտորներ տեխնիկական վրիպման պատճառով մասնակի են փոխհատուցվել: 3-րդ ենթահատվածում հողի կորստի դիմաց փոխհատուցումը ՀՕՏԾ դրույթներին համապատասխանեցնելու նպատակով ՏԾԻԿ-ը նախաձեռնել է ճշգրտող միջոցառումներ, որոնց համաձայն Մաստարա համայնքին լրացուցիչ փոխհատուցվել էր 229,680 դրամ, և Մարալիկ համայնքին լրացուցիչ փոխհատուցվել էր 63,000 դրամ 2017-ի մայիսին (աղյուսակ 13)

Աղյուսակ 13. Ենթահատված 3-ում փոխհատուցումը համայնքային հողի մշտական կորստի դիմաց

Ցուցանիշը. Հողի մշտական կորուստ	Համայնքային հողեր, N	Մակերես մ ²	Փոխհատուցում, դրամ
Ընդամենը 3-րդ ենթահատված			
Ընդամենը	57	156,268	13,964,333
Փաստացի փոխհատուցված	57	156,268	13,964,333
Պայմանագրի անմիջական կնքմամբ	55	146,548	13,380,841
Փոխհատուցվել է հարկադիր օտարմամբ	2	9,720	583,492
Հարկադիր օտարման ընթացքում	0	0	0
Փոխհատուցման ճշգրտում	4	16,833	292,680
Թալին-Լանջիկ (ԱՁԲ)			
Ընդամենը	17	18,551	2,151,692
Փաստացի փոխհատուցված	17	18,551	2,151,692
Պայմանագրի անմիջական կնքմամբ	17	18,551	2,151,692
Փոխհատուցվել է հարկադիր օտարմամբ	0	0	0
Հարկադիր օտարման ընթացքում	0	0	0
Փոխհատուցման ճշգրտում	3	9,634	229,680
Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)			
Ընդամենը	40	137,717	11,812,641
Փաստացի փոխհատուցված	40	137,717	11,812,641
Պայմանագրի անմիջական կնքմամբ	38	127,996	11,229,149
Փոխհատուցվել է հարկադիր օտարմամբ	2	9720	583492
Հարկադիր օտարման ընթացքում	0	0	0
Փոխհատուցման ճշգրտում	1	7199	63000

Աղբյուրը՝ ՏՁՀԿ, Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

Հիմնական բացահայտումներ

Հողի մշտական կորստի դիմաց 105 ԱԵՏՏ-ներից 87-ը փոխհատուցվել են ՀՕՏԾ դրույթներին համապատասխան, իսկ 18 ԱԵՏՏ-ների փոխհատուցումը տեղի ունի հարկադիր օտարման գործընթացի շրջանակներում: Համայնքային բոլոր 57 հողակտորները փոխհատուցվել են ՀՕՏԾ դրույթներին համապատասխան:

Թալին-Լանջիկ (ԱՁԲ) հատվածում հարկադիր օտարման են ենթակա 9 մասնավոր հողակտորներ (510 ԱԵՏՏ-ներ):

Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ) հատվածում հարկադիր օտարման ենթակա են 6 մասնավոր հողակտորներ (8 ԱԵՏՏ-ներ):

Հարկադիր օտարման գործընթացում գրանվող հողերի օտարման դիմաց ՏԾԻԿ-ը դատարանի ղեկավարության հաշվին փոխանցել է ՀՕՏԾ-ով հաստատված փոխհատուցմանը համարժեք գումար:

3-րդ ենթահատվածում հողի մշտական կորստի դիմաց փոխհատուցման ծրագիրը կարող է համարվել ավարտված և համապատասխանող ՀՕՏԾ դրույթներին 87 մասնավոր և 57 համայնքային հողակտորների համար:

Հարկադիր օտարման գործընթացում գտնվում են 15 մասնավոր հողարկորներ: Հարկադիր օտարման գործընթացում գտնվող հողերի համար փոխհատուցման վճարումը կհամարվի ամբողջությամբ ավարտված օտարման մասին դատարանի որոշման ուժի մեջ մտնելուց հետո:

բ) Փոխհատուցումը մշակաբույսերի դիմաց

107.Մշակաբույսերի դիմաց նախատեսվում է տրամադրել 1 տարվա բերքի (մշակաբույսի) շուկայական արժեքին համապատասխան փոխհատուցում: Փոխհատուցման գումարի որոշման համար հիմք է ընդունվել տվյալ մշակաբույսի անցած 3 տարիների միջին գնի և միջին բերքատվության ցուցանիշները: Ընդ որում, բերքատվության ցուցանիշներն ըստ համայնքների տարբեր են:

Աղյուսակ 14. Ենթահատված 3-ում փոխհատուցումը ազդեցության ենթակա մշակաբույսերի դիմաց

Ցուցանիշը. Մշակաբույսերի փոխհատուցում	Հողակտոր, N	Մակերես, մ ²	ԱԵՏՏ, N	Չձևակերպված օգտ., ԱԵՏՏ	Փոխհատուցում, դրամ
1	2	3	4	4.1	5
Ընդամենը 3-րդ ենթահատված					
Ընդամենը	77	101,103	113	15	7,442,602
Համայնքային հող	3	1,503	2	2	82,960
Մասնավոր հող	74	99,599	111	13	7,359,643
Փաստացի փոխհատուցված	63	83,537	90	9	6,447,438
Համայնքային հող	3	1,503	2	2	82,960
Մասնավոր հող	60	82,034	88	7	6,364,479
Պայմանագրի անմիջական կնքմամբ	42	56,794	56	6	4,020,863
Համայնքային հող	3	1,503	2	2	82,960
Մասնավոր հող	39	55,291	54	4	3,937,904
Փոխհատուցվել է հարկադիր օտարմամբ	21	26,743	34	3	2,426,575
Համայնքային հող	0	0	0	0	0
Մասնավոր հող	21	26,743	34	3	2,426,575
Հարկադիր օտարման ընթացքում	14	17,565	23	6	995,164
Համայնքային հող	0	0	0	0	0
Մասնավոր հող	14	17,565	23	6	995,164
Թալին-Լանջիկ (ԱԶԲ)					
Ընդամենը	43	53,762	60	12	2,945,428
Փաստացի փոխհատուցված	34	43,913	45	7	2,405,249
Պայմանագրի անմիջական կնքմամբ	24	31,299	29	5	1,834,444
Փոխհատուցվել է հարկադիր օտարմամբ	10	12,614	16	2	570,805
Հարկադիր օտարման ընթացքում	9	9,850	15	5	540,179
Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)					
Ընդամենը	34	47,340	53	3	4,497,174
Փաստացի փոխհատուցված	29	39,625	45	2	4,042,190
Պայմանագրի անմիջական կնքմամբ	18	25,495	27	1	2,186,419
Փոխհատուցվել է հարկադիր օտարմամբ	11	14,129	18	1	1,855,770
Հարկադիր օտարման ընթացքում	5	7,716	8	1	454,985

Աղբյուրը՝ ՏՀՀԿ, Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

108. Փոխհատուցման ենթակա են սեփական, վարձակալված և ապօրինի օգտագործվող հողակտորից մշակաբույսերի կորուստը:

109. Իրականացման արդյունքներով մշակաբույսերի կորուստի դիմաց փոխհատուցման ենթակա 113 ԱԵՏՏ-ներից փաստացի փոխհատուցվել են 90 ԱԵՏՏ-ներ: Փոխհատուցման դրույքաչափերը և փոխհատուցման գումարները համապատասխանում են ՀՕՏԾ դրույթներին: 90 փոխհատուցված ԱԵՏՏ-ներից 56-ը փոխհատուցվել են պայմանագրի ստորագրման գործընթացի շրջանակներում, մինչդեռ 34 ԱԵՏՏ-ներ ներգրավված են եղել դատական գործընթացներում և փոխհատուցվել են հարկադիր օտարման գործընթացի շրջանակներում:

110. Փոխհատուցման ենթակա մնացած 23 ԱԵՏՏ-ների (14 հողակտոր, 17,565 մ²) փոխհատուցումը կարգավորվում է հարկադիր օտարման գործընթացով: Դատարանի դեպոզիտ հաշվին է փոխանցվել 23 ԱԵՏՏ-ներին հասանելիք 995,164 դրամ փոխհատուցման ընդհանուր գումարը: Դրույքաչափերը և փոխհատուցման գումարների մեծությունը համապատասխանում են ՀՕՏԾ դրույթներին:

Հիմնական բացահայտումներ

Մշակաբույսերի կորստի դիմաց 113 ԱԵՏՏ-ներից 90-ը փոխհատուցվել են ՀՕՏԾ դրույթներին համապատասխան: Մնացած 23 ԱԵՏՏ-ների փոխհատուցման ենթակա գումարները փոխանցվել են դատարանի դեպոզիտ հաշվին՝ ՀՕՏԾ դրույթներին համապատասխան:

3-րդ ենթահատվածի Թալին-Լանջիկ (ԱԶԲ) հատվածում մշակաբույսերի կորստի դիմաց 45 ԱԵՏՏ-ների փոխհատուցումն ավարտված է և համապատասխանում է ՀՕՏԾ դրույթներին: Մնացած 15 ԱԵՏՏ-ների համար հարկադիր օտարման գործընթացը դեռևս շարունակվում է: Հարկադիր օտարման գործընթացում գտնվող հողերի համար փոխհատուցման վճարումը կհամարվի ամբողջությամբ ավարտված օտարման մասին դատարանի որոշման ուժի մեջ մտնելուց հետո:

3-րդ ենթահատվածի Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ) հատվածում մշակաբույսերի կորստի դիմաց 45 ԱԵՏՏ-ների փոխհատուցումն ավարտված է և համապատասխանում է ՀՕՏԾ դրույթներին: Մնացած 8 ԱԵՏՏ-ների համար հարկադիր օտարման գործընթացը դեռևս շարունակվում է: Հարկադիր օտարման գործընթացում գտնվող հողերի համար փոխհատուցման վճարումը կհամարվի ամբողջությամբ ավարտված՝ օտարման մասին դատարանի որոշման ուժի մեջ մտնելուց հետո:

գ) Փոխհատուցումը ծառերի դիմաց

111. ՀՕՏԾ-ով սահմանված իրավունքներին համապատասխան ծառերի և ստացվող բերքի համար տրամադրվում է դրամական փոխհատուցում շուկայական արժեքին համապատասխան՝ հիմնվելով ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության ցուցանիշների վրա: Համայնքային հողի չձևակերպված օգտագործողը ստանում է ծառերի համար ամբողջական փոխհատուցում՝ համայնքի (հողամասի սեփականատիրոջ) կողմից տրամադրված օգտագործումը փաստող տեղեկանքի հիման վրա:

Աղյուսակ 15. Ենթահատված 3-ում փոխհատուցումը ազդեցության ենթակա ծառերի դիմաց

Ցուցանիշը. Ազդեցության ենթակա ծառեր	Հողակտոր, N	Ծառեր, N	Սեփականատեր ԱԵՏՏ, N	Փոխհատուցում, դրամ
Ընդամենը 3-րդ ենթահատված				
Ընդամենը	3	9	5	1,403,160
Փաստացի փոխհատուցված	3	9	5	1,403,160
Պայմանագրի անմիջական կնքմամբ	1	1	3	2,107
Փոխհատուցվել է հարկադիր օտարմամբ	2	8	2	1,401,053
Հարկադիր օտարման ընթացքում	0	0	0	0
Թալին-Լանջիկ (ԱԶԲ)	0	0	0	0
Ընդամենը	0	0	0	0
Փաստացի փոխհատուցված	0	0	0	0
Պայմանագրի անմիջական կնքմամբ	0	0	0	0
Փոխհատուցվել է հարկադիր օտարմամբ	0	0	0	0
Հարկադիր օտարման ընթացքում	0	0	0	0
Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)				
Ընդամենը	3	9	5	1,403,160
Փաստացի փոխհատուցված	3	9	5	1,403,160
Պայմանագրի անմիջական կնքմամբ	1	1	3	2,107
Փոխհատուցվել է հարկադիր օտարմամբ	2	8	2	1,401,053
Հարկադիր օտարման ընթացքում	0	0	0	0

Աղբյուրը՝ ՏՀՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

112. Ծրագրի իրականացման արդյունքներով 3 փայտանյութ տվող ծառերի և 6 դեկորատիվ ծառերի դիմաց փոխհատուցման ենթակա 5 ԱԵՏՏ-ները փոխհատուցվել են: 5 ԱԵՏՏ-ներից 3-ը փոխհատուցվել են պայմանագրի ստորագրման գործընթացի շրջանակներում, մինչդեռ մնացած 2 ԱԵՏՏ-ները փոխհատուցվել են հարկադիր օտարման գործընթացի շրջանակներում (ժառանգության խնդիր): Փոխհատուցման դրույքաչափերը և փոխհատուցման գումարները համապատասխանում են ՀՕՏԾ դրույթներին:

Հիմնական բացահայտումներ

3-րդ ենթահատվածում ծառերի կորստի դիմաց փոխհատուցումն ավարտված է. 5 ԱԵՏՏ-ներ փոխհատուցվել են ՀՕՏԾ դրույթներին համապատասխան:

դ) Փոխհատուցումը շենքերի/շինությունների և շարժական բարելավումների դիմաց

113. 3-րդ ենթահատվածի ԵՆԲ հատվածում 2 ԱԵՏՏ-ներ ենթակա էին փոխհատուցման 2 շենք/շինությունների դիմաց (1 խանութ և 1 տեխսպասարկման կենտրոն): Ծրագրի իրականացման արդյունքներով 2 ԱԵՏՏ-ները փոխհատուցվել են: Նրանցից մեկը փոխհատուցվել է պայմանագրի ստորագրման գործընթացի շրջանակներում, իսկ մյուս ԱԵՏՏ-ն փոխհատուցվել է հարկադիր օտարման գործընթացի շրջանակներում (կադաստրային անհամապատասխանություն): Միավորի արժեքը, ինչպես նաև ընդհանուր փոխհատուցման գումարները համապատասխանում են ՀՕՏԾ դրույթներին:

Աղյուսակ 16. Ենթահատված 3-ում փոխհատուցումը ազդեցության ենթակա շենքերի/շինությունների դիմաց

Ցուցանիշը. Շենք/շինություն	Հողակտոր, N	Շենք/շինություն, N	ԱԵՏՏ, N	Փոխհատուցում, դրամ
Ընդամենը 3-րդ ենթահատված				
Ընդամենը	2	2	2	33,352,853
Փաստացի փոխհատուցված	2	2	2	33,352,853
Պայմանագրի անմիջական կնքմամբ	1	1	1	19,164,892
Փոխհատուցվել է հարկադիր օտարմամբ	1	1	1	14,187,961
Հարկադիր օտարման ընթացքում	0	0	0	0
Թալին-Լանջիկ (ԱՋԲ)				
Ընդամենը	0	0	0	0
Փաստացի փոխհատուցված	0	0	0	0
Պայմանագրի անմիջական կնքմամբ	0	0	0	0
Փոխհատուցվել է հարկադիր օտարմամբ	0	0	0	0
Հարկադիր օտարման ընթացքում	0	0	0	0
Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)				
Ընդամենը	2	2	2	33,352,853
Փաստացի փոխհատուցված	2	2	2	33,352,853
Պայմանագրի անմիջական կնքմամբ	1	1	1	19,164,892
Փոխհատուցվել է հարկադիր օտարմամբ	1	1	1	14,187,961
Հարկադիր օտարման ընթացքում	0	0	0	0

Աղբյուրը՝ ՏՀՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

114. Իրականացման ընթացքում 4 մասնավոր հողակտորներ (5 ԱԵՏՏ, Մարալիկ, ԵՆԲ) և 2 համայնքային հողակտորներ (1-ը Մարալիկում, ԵՆԲ և 1-ը Մաստարայում, ԱՋԲ) փոխհատուցվել են շարժական բարելավումների համար (վերաբնակեցման օժանդակություն): Փոխհատուցման դրույքաչափերը և փոխհատուցման գումարները համապատասխանում են ՀՕՏԾ դրույթներին:

Աղյուսակ 17. Ենթահատված 3-ում շարժական բարելավումների փոխհատուցումը

Ցուցանիշը. Շենք և շինություն	Հողակտոր, N	ԱԵՏՏ, N	Փոխհատուցում, դրամ
Ընդամենը 3-րդ ենթահատված			
Ընդամենը	6	5	510,000
Փաստացի փոխհատուցված	6	5	510,000
Պայմանագրի անմիջական կնքմամբ	6	5	510,000
Փոխհատուցվել է հարկադիր	0	0	0
օտարմամբ	0	0	0
Հարկադիր օտարման ընթացքում	0	0	0
Թալին-Լանջիկ (ԱԶԲ)			
Ընդամենը	1	0	60,000
Փաստացի փոխհատուցված	1	0	60,000
Պայմանագրի անմիջական կնքմամբ	1	0	60,000
Փոխհատուցվել է հարկադիր	0	0	0
օտարմամբ	0	0	0
Հարկադիր օտարման ընթացքում	0	0	0
Լանջիկ-Գյումրի (ԵՆԲ)			
Ընդամենը	5	5	450,000
Փաստացի փոխհատուցված	5	5	450,000
Պայմանագրի անմիջական կնքմամբ	5	5	450,000
Փոխհատուցվել է հարկադիր	0	0	0
օտարմամբ	0	0	0
Հարկադիր օտարման ընթացքում	0	0	0

Աղբյուրը՝ ՏՀՀԿ, Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

Հիմնական բացահայտումներ

3-րդ ենթահատվածում շենք/շինությունների կորստի դիմաց փոխհատուցումն ավարտված է 2 ԱԵՏՏ-ներ փոխհատուցվել են ՀՕՏԾ դրույթներին համապատասխան:

3-րդ ենթահատվածում շարժական բարելավումների կորստի դիմաց փոխհատուցումն ավարտված է 5 ԱԵՏՏ-ներ և 2 համայնքներ փոխհատուցվել են ՀՕՏԾ դրույթներին համապատասխան:

ե) Նպաստներ «սոցիալապես խոցելի» խմբերի համար

